Հավելված
Վեդի համայնքի ավագանու
2022թվականի սեպտեմբերի 13-ի N121-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ աշխատակազմի ստորաբաժանումների կողմից՝ զարգացման բաժնի համակարգմամբ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի կողմից

ՎԵԴԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԱԽԱԲԱՆ 2

II. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

1. Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ 4

III. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ 6

1. Տեղական ինքնակառավարման մարմիններ 6

2. Գյուղատնտեսություն 7

Հողատեսքեր և բերքատվություն

3. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 11

4. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 13

5. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14

2022-2026թվականի նախատեսվող ծրագրեր 15

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 19

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության սոցիալական կազմը 21

7. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ 23

Համայնքի մշտական բնակչության տնային տնտեսությունների ցուցանիշները 23

8. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 23

8. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹԵՎ ՍՊՈՐՏ 24

Վեդի համայնքի նախադպրոցական, արտադպրոցական կազմակերպությունների, հանրակրթական ՊՈԱԿ-ների վերաբերյալ ցուցանիշներ 25

IV. ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ 33

V. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ 34

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ/ՈԼՈՐՏՆԵՐԻ 34

VI. ՄՈՆԻԹՐԻՆԳԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 37

VII. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ 38

VIII. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 38

1. ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ 39

2022թվականի ներկայացված սուբվենցիոն ծրագրեր 39

2. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՄՓՈՓԲՆՈՒԹԱԳԻՐ 174

I. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի՝ Վեդի համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ), համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և տեսլականի իրականացում:

Վեդի համայնքի 2022-2026 թթ. հնգամյա զարգացման ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները՝ նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները: Ինչպես նաև վերջին տարիներին համայնքների միավորման արդյունքում ձևավորված այն իրողությունը, որով Արարատի մարզի 19 բնակավայրեր միավորել են իրենց ուժերն ու կարողությունները որպես մեկ միասնական համայնք:

Նշենք, որ սանոր ձևաչափ է. այն առաջարկում է համայնքի զարգացման պատասխանատուներին իրենց տեսլականները ձևակերպել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր բնակավայրի շահերն ու հետաքրքրությունները: Գործընթացի վրա դրական ազդեցություն է ունեցել նաև ընտրական օրենսգրքի այն բարեփոխումները՝ համաձայն որի համայնքային ինքնությունները իրենց պարտականությունների կատարման մասով կրում են լրացուցիչ պատասխանատվություն այն քաղաքական ուժի հանդեպ, ում կողմից առաջադրվել են:

Հայաստանում վերջին տարիներին կատարված արմատական փոփոխությունները ստեղծել են նոր իրողություններ, որոնք իրենց հերթին փոխել են բազային տվյալները՝ առաջացնելով նոր խնդիրներ և առաջ քաշել նոր նպատակներ, որոնց հասնելու համար անհրաժեշտ է ցուցաբերել նոր ծրագրային մոտեցումներ, ինչ ինքն ձեռնամուխ է եղել սույն ծրագրի մշակման նախաձեռնող խումբը:

ՀՀԶԾ-ն համահունչ է ՀՀ Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած ազգային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին: ՀՀԶԾ-ն նպատակ է հետապնդում բարելավելու համայնքի բնակիչների բարեկեցությունը, ավելացնելու համայնքի՝ նրանում ներառված բնակավայրերի դիմակայունության ունակությունները, ստեղծելու ինստիտուցիոնալ հիմքեր համայնքի կայուն զարգացման համար:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ,ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Համայնքն անվանակոչվել է համայնքի կենտրոն հանդիսացող Վեդի քաղաքի անվանումից: Վեդի քաղաքը նախկինում[1] ունեցել է Բեյուկ Վեդի,Բեյուք Վեդի,Բոյուք Վեդի,Վեդի Մեծ,Վեդի Վերին,Վետե,Վետի անվանումները:Վեդի է վերանվանվել 1946 թ-ին: Քաղաքի անվանումը ենթադրաբար մտածումեն,որ սերում է պարսկերենից և նշանակում է «կիրճ»: Մինչև 1995թ-ի նոր վարչատարածքային ռեֆորմը Վեդին եղել է քաղաքատիպավան և Արարատի վարչական շրջանի կենտրոնը:

Քաղաքը տեղադրված է Միջինարաքսյան գոգավորությունում, Վեդի գետի աջափնյա սարավանդում: Ծովի մակարդակից տեղադրված է մոտ 850 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են նոյեմբերի վերջից, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -15-ից -20:Նվազագույն ջերմաստիճանը դիտվել է՝ -32 աստիճան :Ամառը տևական է՝մայիսից մինչև հոկտեմբեր օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 200-250մմ է: Բնական լանդշաֆտները

[1] Տես՝ Կիսրաի մարզպետարանի պաշտոնական կայք-էջ՝ http://ararat.mtad.am/about-communities/71/

կիսաանապատներեն,որոնք ոռոգման ընթացքում վերեն ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտների: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Քաղաքի միջով հոսում է Վեդի գետը, բացի այդ կան նաև ստորգետնյա,հանքային ջրերի պաշարներ:Վերջին տարիներին կլիմայական փոփոխությունների պատճառով նկատվում է Վեդի գետի ջրային պաշարի սակավություն:

Բնակչության նախնիների մի մասը 1915-1920թթ. գաղթել է Արևմտյան Հայաստանի՝ Վանի, Շատախի, Մուշի գավառներից, իսկ նոր ժամանակներում՝ Մարտունու, Սիսիանի և Եղեգնաձորի շրջաններից: 1831 թ-ին ունեցել է 1244, 1897 թ-ին՝ 2798, 1937 թ-ին՝ 2830, 1959 թ-ին՝ 3581, 1970 թ-ին՝ 6165, 1989 թ-ին՝ 10757 բնակիչ: 1988-1989 թթ.Ադրբեջանից բռնի տեղահանվել են շուրջ 561մարդ:Ըստ 2005թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ քաղաքի բնակչությունը կազմում է 13100 մարդ, որից 48%-ը տղամարդիկ են, իսկ 52%-ը՝ կանայք: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 29%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝60%,հետաշխատունակները՝11%:

Վեդի քաղաքում գործում են 2 միջնակարգ և 1 ավագ դպրոցներ, գրադարաններ, երաժշտական դպրոց, մանկապարտեզներ, մարզական դպրոց, մշակույթի տուն, հիվանդանոց, ծննդատուն, շտապ օգնության կայան, կապի հանգույց:Ներկա իրավիճակի գնահատմամբ,կարող ենք ասել, որ կան նախնական բավարար հաստատություններ՝ քաղաքային կյանքն ապահովելու համար:

Ոչ գյուղատնտեսական արտադրական ճյուղերից քաղաքում առկա է նաև տրավերտինի քարերի մշակման արտադրամաս՝ իր սալիկների արտադրությամբ: Նրա արտադրանքն իրացվում է ինչպես շրջանի,այնպես էլ հանրապետության սահմաններից դուրս: Գործում է պլաստմասե խողովակների «Վեդի-պլաստ» ՍՊԸ արտադրությունը:Գործում է նաև պանրի գործարան:

Վեդի համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը, որն ունի մերձքաղաքային տնտեսության ուղղվածություն, այսինքն, նաև մայրաքաղաքին մատակարարում է գյուղատնտեսական թարմ թերքներով:Շոգկլիմայի շնորհիվ գյուղատնտեսական հողահանդակները պարտադիր ոռոգման կարիք ունեն: Օգտագործվում են Ազատ գետի, Արտաշատի ջրանցքի և ստորգետնյա՝արտեզյան ավազանի ջրերը:Չնայած

այս հանգամանքին՝ վերջին տարիներին համայնքն իր տարածաշրջանում ունի առաջատարի դիրք:

Ստորև, ըստ ոլորտների, ներկայացված է Վեդի խոշորացված համայնքի հանրային կյանքն ամբողջացնող ոլորտների ընդհանուր նկարագիրը: Գյուղական բնակավայրերի մասին ամփոփ նկարագիրը ներկայացված է կից[2]:

III. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Վերջին ընտրական իրավունքներով պայմանավորված՝ իր կազմում ներառված բնակավայրերով հանդերձ, Վեդի համայնքի զարգացման պատասխանատվությունը կրում են համայնքային ինքնությունները և աշխատակազմը:

Համայնքը՝ համապատասխան ՀՀ օրենսդրության ղեկավարվում է 27 ավագանու և համայնքի ղեկավարի կողմից, որոնք ընտրվում են համայնքի բնակչության կողմից 5 տարի ժամկետով: Վեդի համայնքի աշխատակազմում իրենց մասնագիտական ծառայություններն են մատուցում 179 պաշտոնատար անձիք, որից՝

Համայնքային քաղաքական պաշտոններ

Համայնքի ղեկավար - 1

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ - 1

Համայնքի ղեկավարի տեղակալ - 2

Համայնքային հայեցողական պաշտոններ

Համայնքի ղեկավարի խորհրդական - 2

Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար - 1

Համայնքի ղեկավարի օգնական - 2

Խմբակցության փորձագետ - 2

Համայնքային վարչական պաշտոններ - 18

Համայնքային ծառայության պաշտոններ - 8

Տեխնիկական սպասարկումի իրականացնող անձնակազմ - 34

Քաղաքացիական աշխատանքի իրականացնող անձնակազմ - 25

Կառուցվածքային ստորաբաժանումներ

Իրավաբանական բաժին - 5

[2] Տես՝ «Համայնքների ընդհանուր բնութագիր» վերնագրված հավելվածը

Քաղաքաշինության և հողաշինության բաժին-7

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժին-6

Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժին-8

Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին-7

Քարտուղարության և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին-33

Կրթության,մշակույթի,սպորտի և երիտասարդության հարցերի բաժին-6

Զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժին-6

Կոմունալ տնտեսության,համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժին-5

Համայնքի ղեկավարման աշխատանքներում վերը նշված հաստիքները ոչ միշտ են համալրված, ընդ որում առկա է պրոֆեսիոնալիզմի խնդիր: Սա ենթադրում է, որ գործող վերապատրաստման ծրագրերին զուգահեռ անհրաժեշտ է մշակել և պարբերաբար իրականացնել աշխատակազմի կարողությունների զարգացման դասընթացներ՝ օգտվելով առաջավոր փորձից: Ընդհանուր առմամբ կադրերի խնդիրը առկա է ոչ միայն համայնքապետարանում,այլ նաև հանրային կյանքը համակարգող գրեթե բոլոր ոլորտներում:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վեդի խոշորացված համայնքը՝ Վեդի քաղաքով և 18 գյուղական բնակավայրերով՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվով, հանրապետությունում գտնվում է առաջատար դիրքում՝ իր համեմատաբար զարգացած գյուղատնտեսական արտադրանքի և վերամշակման արդյունքներով:

Համայնքի բոլոր բնակավայրերում, առկա են ոռոգման խնդիրներ, հատկապես հողային հունով ջրատարներ, որոնց կորուստները բավական մեծ են ամռան ամիսներին: Որոշ բնակավայրերում (առաջնային՝ Շաղափ բնակավայր) կան չգործող արտեզյան հորեր,որոնք ենթակաեն վերանորոգման: Կա նաև մեծ անհրաժեշտություն ներքին ջրային հոսքերի ուսումնասիրության և նոր արտեզյան հորերի հորատման (մասնավորապես Լանջանիստ,Լուսաշող բնակավայրեր):

Վեդի համայնքում ոռոգման ջրի հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների նախաձեռնման,

ծրագրման և իրականացման փուլերում հաշվի է առնվելու Վեդու ջրամբարի ապագա շահագործման փաստը: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ Վեդու ջրամբարը շահագործման կհանձնվի 2025թվականին: Ջրամբարից որոշակի չափով ջրօգտագործման հավանականություն կա սկսած 2023 թվականից:

Կարկտային տեղումները հաճախակի են գարնանը,որը մեծ վնասներ է հասցնում մշակաբույսերին և ազդում է բերքատվության վրա:Համայնքի վարչական տարածքում կան անմշակ վարելահողեր և արոտավայրեր:Բարելավելով հողերը, ներդնում ենք կարճաճ պտղատեսակներ, բարձրարժեք մշակաբույսեր և բարձր բերքատու բանջարաբոստանային սորտեր, որոնք հիմնված են լինելու ագրոքիմիական նմուշառումների և հողերի ագրոքիմիական քարտեզների ցուցանիշներով:

Համայնքում ագրոտեխնիկական միջոցառումները բավականին թանկարժեք են ֆերմերների համար, քանի որ գյուղատնտեսական մեխանիզացիան բավականին հնամաշ է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, ուստի անհրաժեշտություն կա դրանք աստիճանաբար համալրել նորերով:

Համայնքի բնակիչների եկամուտների ավելացման նպատակով, առաջարկում ենք պետություն-համայնք համագործակցությունով ստեղծել որոշ բնակավայրերի ավանդական մշակաբույսերի վերամշակման արտադրամասեր, չրանոցներ,ջերմատներ և սնկանոցներ:

Համայնքի որոշ բնակավայրեր ունեն գյուղատնտեսական կենդանիների բուծման ուղղություն՝ բուծվում են ցածր մթերատու կենդանիներ,որոնց բարելավումը կամ որցեղերի ներկրումը կնպաստի մթերատվության բարձրացմանը:

Համայնքի ամբողջ տարածքում, գյուղատնտեսության բնագավառի զարգացման համար խնդրահարույց է խորհրդատվական ծառայությունների շոշափելի պասիվությունը:

Ընդհանուր առմամբ՝ համայնքում մասնագիտական խորհրդատվական ծառայությունների ակտիվացման, ինտենսիվ այգիների, ոռոգման արդիական համակարգերի /հողային հունով ջրատարների փոխարինումը

կիսախողովակներով/, կարկտապաշպան ցանցերի ներդրման և այլ միջամտությունների շնորհիվ նպատակ է դրվել խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնումը, պտղաբուծության և խաղողագործության զարգացումը, ինչպես նաև հողերի արդյունավետության բարձրացումը:

Գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման ծրագրերի իրականացման շրջանակներում, համայնքում՝ մշակաբույսերի, պտղատու և խաղողի այգի մշակող տնտեսվարողների մոտ գրեթե կբացառվի կարկտահարության ռիսկը,ինչը խնդիր է ֆերմերների համար և բացասաբար է ազդում գյուղատնտեսության գրավչության վրա:

Համայնքի գրեթե ամբողջ տարածքում հրատապ է արոտավայրերի բարելավման, չօգտագործվող հողերի մակերեսների կրճատման,նոր սորտերի և տեխնոլոգիաների ներդրման, բազմամյա տնկարկների ավելացման, բանջարա-բոստանային և հացահատիկային բարձրարժեք մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման, անմշակ հողատարածքների ռացիոնալ օգտագործման օրակարգի ներդրումը:

Համայնքի գյուղատնտեսության զարգացման պատասխանատուները նպատակ են դրել սույն ծրագրի մեկնարկում՝ համագործակցելով հանրապետությունում գործող 6 գիտական կենտրոնների հետ՝ հողերի բերքատվության, նպատակային մշակության նպատակով անցկացնել հողերի ագրոքիմիական նմուշառումներ,կազմել քարտեզներ, որոնք հիմք կծառայեն գյուղատնտեսական մշակաբույսերի գիտականորեն հիմնավորված նորմաներով սնուցմանը և պարարտացմանը: Նույն համատեքստում հանդիպումների, սեմինարների միջոցով ֆերմերներին սահմանված ծրագրի շրջանակներում հասցնել բարձր բերքատու բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի,խաղողի և պտղատուների կարճաճ սորտերի, ինչպես նաև նորանուն թունաքիմիկատների վերաբերյալ տեղեկատվություն:

Առանձնահատուկ ուշադրություն է արժանի փակ գրունտում ձևավորված գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետության բարձրացումը, որի նպատակով պետության կողմից առաջարկվող սուբսիդավորվող ծրագրերի օգնությամբ անհրաժեշտ է ավելացնել ժամանակակից ջերմատների ծավալները և ընդլայնել միասնական ծառայությունների մատուցման շրջանակները:

Գյուղատնտեսության զարգացման պատասխանատուները՝ արտադրական, գյուղատնտեսական, սպառողական կոպերատիվների և միավորումների ստեղծման նպատակով կիրականացնեն համապատասխան հանդիպումներ՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ և կցուցաբերեն հետևողական աջակցություն: Հողատեսքերի և բերքատվության վերաբերյալ ստորև տեղեկացվում է աղյուսակի տեսքով:

Հողատեսքեր և բերքատվություն
Աղյուսակ՝ 1

ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2022**	***Միջին բերքատվություն գ/հա***
1.Վարչական տարածք	Հա	**73266,64**	
2.Բնակավայրի բնակելի	**Հա**	**2807,145**	
3.Գյուղատնտեսական նշանակության հողեր Որից՝	**Հա**	**55936,6**	
ա/Վարելահող	**Հա**	**9134,4834**	**356,6**
բ/Բազմամյա տնկարկներ	**Հա**	**3687.8**	
գ/պտղատու այգի	**Հա**	**1886.3**	**153,7**
դ/խաղողի այգի	**Հա**	**1801.5**	**207,8**
ե/խոտհարկ	**Հա**	**698,896**	**17,7**

զ/արոտ	**Հա**	**30574,857**	
է/այլ հողատեսքեր	**Հա**	**11840,582**	

Անասնապահության ոլորտում առկա են խնդիրներ, որոնք բնորոշ են ողջ հանրապետությանը, այսինքն՝ պրոֆեսիոնալ կադրերի սակավություն, արոտավայրերի չնորմավորված օգտագործում, անասնապահական ծագում ունեցող մթերքի և հումքի վերամշակման կարողությունների սակավություն: Սա հանգեցրել է այն իրողությանը, որ համայնքը անասնապահական ծագում ունեցող մթերքի և հումքի մասով ինքաբավ չէ և բնակչության անհրաժեշտ պահանջը բավարարվում է ներկրման միջոցով:

Համայնքում բուծվող գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ **Աղյուսակ՝ 2**

Խոշոր եղջերավոր	Մանր եղջերավոր	Խոզ	Ձի	Թռչուն
10380,որից կով՝ 3694	**29518,որից մայր՝ 23058**	**Խոզ 2851, ից մայր՝ 435**	**378**	**114092,որից ավ՝ 102625**

3. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների բնակլիմայական փոփոխությունների ֆոնին առավել կարևորվել են բնապահպանական խնդիրները, որոնք ուղղակիորեն բացասաբար են ազդում համայնքի բնակչության ինքնազարգացման և ինքնավերականգնման հնարավորությունների վրա, որն էլ իր հետևանքն է ունենում համայնքի ընդհանուր զարգացման ցուցանիշների վրա:

Վեդի համայնքում գործում են հանքահումքային ձեռնարկություններ, որոնք հիմնականում տեղակայված են քաղաք Վեդիում, Գոռավանում, Սիսավանում, Ուրցաձորում:

Չնայած համապատասխան պետական ինստիտուտների հսկողությանը՝ լինում են դեպքեր, երբ արտանետումները գերազանցում են սահմանված չափերը:

Բնակավայրերի տարածքում կան հողատարման թեքություններ, որոնցից խուսափելու համար պետք է հիմնվեն պաշտպանիչ անտառաշերտեր, որոնք կխթանեն նաև կանաչ գոտիների ավելացմանը:

Ներկա փուլում համայնքի բնապահպանական իրավիճակի բարելավման նպատակով առանձնացրել ենք հետևյալ միջամտությունները՝

1. Համայնքի հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, շրջակա միջավայրի վրա նվազ կամ անվնաս ազդեցություն:
2. Քայքայված, դեգրադացված հողերի վերականգնում՝ առանց շրջակամիջավայրին վնաս հասցնելու:
3. Համայնքի բնակավայրերի պաշտպանիչ գոտիների վերականգնում, թեքությունների վրա հակակոռոզիոն տնկարկների հիմնում, կանաչ տարածքների ընդլայնում:
4. Հանքահումքային ձեռնարկությունների մթնոլորտային արտանետումների նվազեցում, թափոնների նկատմամբ կառավարելի վերահսկում:
5. Էկոհամակարգերի ճիշտ կառավարում, կենդանական և բուսական աշխարհի բնական վերարտադրության ապահովում, նպաստում:
6. Մասնակցություն բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
7. Հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի ձկնորսության, որսագողության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումներին մասնակցություն, խախտումների դեպքում համապատասխան մարմիններ հետ համագործակցում:
8. Մասնակցություն ջրային ռեսուրսների ճիշտ կառավարմանը:

Բնապահպանական խնդիրներից զատ, համայնքի հարևանությամբ կան բնական էկոհամակարգեր, որոնք նպաստում են համայնքի զարգացմանը: Վառ օրինակ է Խոսրովի պետական արգելոցը, որը հիմնադրվել է 13.09.1958 ՀՍՍՀ ՄՍ որոշում՝ ՆՊ-341: Տարածքը կազմում է 232. 135հա:

Խոսրովի արգելոցը տեղակայված է Գեղամալեռնավահանի հարավային, Մերձարաքսյան Ուրծ և Երանոս լեռնաշղթաների լանջերին, Ազատ և Վեդի գետերի ավազաններին: Գտնվում է ծովի մակարդակից 800-2800մ բարձրության վրա:

Արգելոցում պահպանվում են երրորդական դարաշրջանից մեզ հասած գիհու և կաղնու անտառները, կիսաանապատային և ֆրիգանային լանդշաֆտների չորասեր համակեցությունները և այլ միջերկրածովյան ռելիկտային բուսականության էկոհամակարգերն, ինչպես նաև այդ միջավայրերին հարմարված հազվագյուտ կենդանիների և բույսերի գենոֆոնդը: Արգելոցի տարածքում հանդիպում են 1849 տեսակի բարձրակարգ բույսեր և 283 տեսակի ողնաշարավոր կենդանիներ:

4. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Զբոսաշրջությունը ՀՀ-ի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Այն տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը և այլն: Այս ամենին զուգահեռ Վեդի համայնքի զբոսաշրջային ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ ՀՀ-ի զարգացումներին, ուստի կարևորվում է առկա զբոսաշրջության հիման վրա զբոսաշրջության կայուն զարգացումը: Համայնքի զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է պատմահուշարձանների առատությունը, որն ունի զբոսաշրջիկներին հետաքրքրելու որոշակի ներուժ, ուստի այդ ամենը կարիք ունի վերանորոգման և գովազդի: Վեդի համայնքում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրներն են.

- Զբոսաշրջային տնտեսության, գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը, զբոսաշրջային նշանակության օբյեկտների վերաբերյալ գովազդայինությունների պակասը:

- Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է ենթակառուցվածքների զարգացումը՝ հյուրանոցների, հյուրատների,հանգստյան տների կառուցում,վերանորոգում, վերակառուցում,պատմամշակութային վայրերի նորոգում,և դեպի այդտեղ տանող ճանապարհների վերանորոգում:
- Խոր Վիրապ համալիրի ջրաճահճային տարածքում զարգացնել էկոտուրիզմը:
- Զբոսաշրջության խթանման համար անհրաժեշտ է ջրաճահճային արգելոցի տարածքում տեղադրել դիտակետեր, կառուցել անցուղիներ, այլ տարածքներում կազմակերպել լեռնային հեծանվավազքի,ձկնորսության միջոցառումներ:
- Ազատ և Վեդի գետերի կիրճերում առանձին բարձրունքներից իրականացնել դիտարկումներ, կենսաբազմազանության ուսումնասիրության շրջանակներում գիտական տուրիզմ:
- Վեդիում կան միջնադարյան ամրոցներ,որոնք կարող են հանդիսանալ զբոսաշրջային հնավայրեր: Զբոսաշրջության համար կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև «Գոռավանի ավազներ»արգելավայրը:

Բացի այս ամենից պլանավորվում է ապահովել ժամանցի վայրերը ընտանեկան տուրիզմի զարգացման համար:

5. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեդի համայնքում այս ոլորտին առնչվող իրողությունները իրապես չեն տարբերվում Հայաստանի միջին վիճակագրությունից: Գործում են մեծածախ և մանրածախ խանութներ, կրպակներ, հանրային սննդի օբյեկտներ, հյուրատներ, բենզալցակայաններ, գազալցակայաններ, ավտոտեխսպասարկման կետեր, կապի միջոցներ և ինտերնետ ծառայություններ, դեղատներ և հանրային կյանքը սպասարկող այլ ծառայություններ: Առանձնակի ուշադրության է արժանի առանց պիտանիության ժամկետի,պիտանիության ժամկետներն անցած,ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով,պիտանիության ժամկետի կրկնակի մակնանշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով ապրանքի վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացումը:

Ստորև ներկայացվում է 2022- 2026 թվականի առևտրի և սպասարկման ոլորտում նախատեսվող ծրագրերը:

Աղուսյակ 1

2022-2026 թվականի նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանումը	Համագործակցության	Անմիջական նպատակը	Հիմնական շահառուները	Սկիզբը և ավարտը	Ֆինանսավորման աղբյուր
1	Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետներն անցած,ոչ ընթեռնելի պիտանիության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնանշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով ապրանքի վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացում		Վերահսկողության բարձրացման միջոցով նվազեցնել բնակչության սննդից թունավորման ռիսկերը և բարձրացնել առևտրի օբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների որակը	Բնակչությունն	2022-2026	Չի պահանջվում
2	Առևտրի և գովազդի ծառայություններին ոլորտում սպասարկման որակի բարձրացում էլեկտրոնային		Ծառայությունների թվայնացման միջոցով, մեկանգամյա դիմում համակարգի ներդրումով	Տնտեսվարողներ	2022-2026	Համայնք

	համակարգի ներդրման միջոցով		բացառել քաղաքացիներից և տնտեսվարողներից լրացուցիչ տեղեկատվությունների տրամադրումը և այցելությունները համայնքապետարան,եթե այն արդեն առկա է տեղեկատվական շտեմարանում:			
3	Փողոցային առևտրի Վերահսկման, հիգիենայի պահպանման և չթույլատրված վայրերում վաճառքի դեպքերի հայտնաբերում և կանխարգելում	ՀՀ ոստիկանություն	Բացառել անորակ, ժամկետանց, ոչ ճիշտ պահպանվող, սննդի, նյութերի վաճառքը և ազատել մայթերը առևտրականների կողմից ապօրինի կերպով զբաղեցրած ապրանքներից:	Բնակչություն	2022-2026	Չի պահանջվում

Համայնքային զարգացման պատասխանատուների կողմից նախատեսվում է իրականացնել նաև համայնքի տարածքում օրենքով սահմանված կարգով հսկողություն՝ առևտրի և հանրային սննդի ոլորտում, կանոնակարգել և շուկաներ տեղափոխել բացօթյա առևտուրը, համայնքի փողոցները մաքրել անօրինական առևտրից: Պարբերաբար վերահսկել համայնքի բյուջեկատարած վճարումները:

Համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տալ՝

1. Ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն,

2. Համայնքի տարածքում բացօթյա վաճառք, տոնավաճառներ կազմակերպելու թույլտվություն,

3. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն, Համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն,

4. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվություն՝ որոշակի վայրերում,

5. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն:

Աղյուսակի տեսքով ներկայացվում է Վեդի համայնքի առևտուր և ծառայություններ իրականացնող կազմակերպությունների մասին ամփոփ տեղեկատվություն:

Վիճակի նկարագրություն		
Ցուցանշներ	Վեդի համայնք	
	Չափի միավոր	2022
Առևտրի օբյեկտներ	հատ	34
Հանրային սննդի օբյեկտներ	հատ	10
Հյուրանոցային համալիրներ	հատ	0
Գյուղական արտադրանքի շուկաներ	հատ	0
Սգոսրահներ	հատ	0
Տեխնիկական հեղուկներ վաճառող օբյեկտներ	հատ	5

Հեղուկ վառելիքի մանրածախ առևտուր	հատ	7
Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի օբյեկտներ	հատ	1
Տաքսի ծառայություններ	հատ	0

Ներկա պահին Վեդի քաղաքային բնակավայրի տարածքում գործում են 116 օբյեկտներ (հիմնականում կարգավորված են այդ օբյեկտների տեղաբախշման և արտաքին համաչափության հարցերը),որից՝

- սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների վաճառքի խառը խանութներ -34
- ոչ պարենային ապրանքների վաճառքի խանութներ -5
- դեղատներ -10
- զենքի վաճառքի կետ-0
- հացի և հացաբուլկեղենի վաճառքի կետ–1
- թանկարժեք մետաղներից ապրանքների վաճառքի կետ–1
- տոնավաճառ –0
- գյուղատնտեսական արտադրական շուկա–0
- առևտրի կենտրոններ –0
- վառելիքի լցակայաններ –3
- գազի լիցքավորման կետ–4
- հանրային սննդի օբյեկտներ -10
  - ա)ճաշարաններ –0
  - բ)սրճարաններ –2
  - գ)ռեստորաններ –3
- խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման օբյեկտներ –5
- քաղաքային բաղնիք -0
- հացի արտադրամաս –2
- լավաշի արտադրամաս –5
- ավտոտեխսպասարկման կետ–11
- վարսավիրանոցներ –14
- կոշիկի վերանորոգման կետ-3
- քարերի մշակման արտադրամաս –2

- «ՎԵԴՈՒ ՊԱՆԻՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ»-1

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվում է սոցիալական կարիքների գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի վրա՝ միաժամանակ խրախուսելով քաղաքացու սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների և հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են:

Սոցիալական պաշտպանության ոլորտում համայնքն աջակցում է պետական սոցիալական ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում է տեղական և անհատական սոցիալական ծրագրերի մշակումը, իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը: Իրականացվող աշխատանքների ռազմավարությունը ուղղված է համայնքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանն ու պահպանմանը:

Համայնքում որպես սոցիալական խնդիր կարող է դիտվել թափառող շների հարցը: Հարկ կա անդրադառնալու նրանց լիկվիդացման հարցին: Մտահոգության առաջնային պատճառներից մեկը՝ բնակիչների անհանգստությունն ու վախն է, երկրորդը՝ թափառող շներից մարդկանց անցնող վարակներն ու հիվանդությունները:

Աղքատության հաղթահարման լավագույն ու արժանապատիվ միջոցը աշխատանքն է: Սակայն գործազրկության մակարդակը Վեդու տարածքային զբաղվածության կենտրոնի տվյալների համաձայն կազմում է աշխատունակ բնակչության 48%-ը, որից մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը՝ պայմանավորված COVID-19-ով և

հետպատերազմական իրավիճակով, գործազրկության հետ կապված խնդիրներն ավելի բազմաշերտեն դարձել և պահանջում են համակարգային լուծումներ: Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն է տրամադրվում բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքներին:

Ընտանիքում ապրող երեխայի իրավունքի իրականացման համալիր ծրագրի նպատակն է՝ ամրագրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ իրենց կենսաբանական ընտանիքներում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված և դրա անհնարինության դեպքում, ընտանեկանին մոտ այլընտրանքային խմանքի ծառայությունների տեսականու և ցանցի ընդլայնում ապահովող ցանցը, սահմանել դրանց կատարման համար պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները,ֆինանսավորման աղբյուրները,թիրախներն ու արդյունքները առաջիկա տարիների համար:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի դրույթներով ամրագրված պահանքների համաձայն՝ Վեդի համայնքում որդեգրողների, խնամատար ծնողների, խնամակալների կամ հոգբարձուների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ իրականացվող մշտադիտարկումը նպաստում է երեխայի իրավունքների ոտնահարման կանխարգելմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովման ուղղություններն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը, նրանց լիակատար ներառումը հասարակության մեջ, մատչելի պայմանների, որակյալ ծառայությունների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները: Սոցիալական ծրագրերում առաջնահերթություն է տրված ԼՂՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն,հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին,ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին:

Հաշվի առնելով հայրենադարձ, փախստական, ինչպես նաև Արցախից տեղահանված ընտանիքների սոցիալական խնդիրները՝ միջոցներ է ձեռնարկվում նրանց արագ ինտեգրման համար:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բավարար չէ, և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները բախվել են անհամաչափ: Տարեցների իրազեկվածությունը սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ եղել է ցածր: Աշխատանքներ են տարվում՝ ուղղված տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը:

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունն իրականացվում է համաձայն Վեդի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի N 62 □ՀՀ Արարատի Վեդի համայնքի կամավոր խնդիրները սահմանելու և դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունը իրականացնելու մասին□որոշմանը:

Վեդի համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու համար ներդրվել է անապահովության գնահատման նոր համակարգ (բալային), որի շնորհիվ աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական: Նոր համակարգի ներդրման հիմնական նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրելիս լինել առավելագույնս անաչառ, օբյեկտիվ, անկողմնակալ:

Արդիական է նաև արտակարգ իրավիճակներում և նման ատիպայլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին /օրինակ՝ COVID, ռազմական դրության, շենքերի փլուզման, երաշտի և այլն/ աջակցության տրամադրումը:

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության սոցիալական կազմը

Հ/Հ	Ցուցանիշների անվանում	Չափի մ.	Քանակը	Իգական	Արական
1.	Բնակչության թիվը այդ թվում	մարդ	**54005**	26692	27313

1.1	0-6 տարեկան	Մարդ	3755	1574	2181
1.2	7-17 տարեկան	Մարդ	8225	3648	4577
1.3	18-63 տարեկան	Մարդ	34031	16382	17649
1.4	63 տարեկանից բարձր	Մարդ	1587	770	817
2.	Կենսաթոշակառուներ	մարդ	4315	2226	2089
3.	Տարեց կենսաթոշակառուներ (75տև բարձր)	Մարդ	2092	1204	888
4.	Հաշմանդամներ, որից՝	Մարդ	608	330	278
4.1	Հաշմանդամ երեխա	Մարդ	63	35	28
4.1.1	0-5 տարեկան	Մարդ	36	15	21
4.1.2	6-18 տարեկան	Մարդ	27	14	13
5.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	Մարդ	135	56	79
6.	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ	մարդ	0	0	0
7.	1988-1994 թթ., ՀՀ սահմանների պաշտպանություն և արցախյան պատերազմի մասնակիցներ	մարդ	30	1	29
8.	Հրադադարից առաջ և հետո Արցախյան պատերազմում զոհված (մահացած) զինծառայողների թիվը	ընտանիք	8	0	0

7. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեդի համայնքը բնակչության թվով դասվում է միջին խտությամբ բնակեցված համայնքների շարքին: Համայնքը յուրահատուկ է նրանով,որ մի շարք բնակավայրերում ապրում և իրենց բնականոն կենսագործունեությունն են ապահովում եզդի ազգաբնակչության ներկայացուցիչներ: Բացի եզդիներից Վեդի համայնքում ապրում են ասորիներ, ռուսներ,ուկրաինացիներ,մոլդովացիներ:

Համայնքի մշտական բնակչության ընդհանրական պատկերը հետևյալն է՝

Աղուսյակ 1.

Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը,մարդ	54005
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	2963 ք. Վեդի
2.1	Այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	19 ք. Վեդի
2.2	Կիսակառույց տներում բնակվող	
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	1173
4.	Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների քանակը	183
5.	Համյնքում գործազուրկների քանակը (18-63 տարեկանների շրջանում)	~ 16000

8. ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Վեդի համայնքի կոմունալ տնտեսության զարգացման նպատակով առանձնացվելենհետևյալ միջամտությունները՝

1. Վեդի քաղաքի բազմաբնակարան շենքերի բակերում և համայնքներում ավելացնել նստարաններ բնակիչների հանգստի համար:Ավելացնել նաև աղբամանների քանակը:

2. Լուսավորության ցանցում տեղադրված լամպային լուսատուները փոխարինել էլեկտրաէներգիա խնայող ԼԵԴ լուսարձակներով: Վեդի համայնքում կատարել լուսավորության ցանցում տեղադրված լամպերի ավելացում: Փողոցային լուսավորության արկղերի, սարքավորումների թարմացում: Նոր փողոցներում լուսավորության ցանցի անցկացում, թափառող շներից և այլ վտանգներից զգուշանալու համար:

3. Վեդի քաղաքի, ինչպես նաև բնակավայրերի կանաչապատ տարածքների պահպանման, ավելացման համար անհրաժեշտ է անցկացնել նոր ոռոգման ցանց: Հուլիս, օգոստոս ամիսներին պակասում է խորքային հորի ջուրը, ուստի անհրաժեշտ է կատարել նոր հորատում:

4. Վեդի համայնքում աղբահանությունը կատարվում է հնամաշ մեքենաներով, այդ իսկ պատճառով աղբահանությունը կատարվում է ոչ պատշաճ: Քամին աղբը տարածում է տեղադրված աղբամանների տարածքում, ուստի պետք է ավելացնել աղբարկղերի քանակը: Անհրաժեշտ է նաև ձեռք բերել նոր աղբահանության մեքենաներ, աղբահանությունը պատշաճ կազմակերպելու համար:

5. Լուսավորության ցանցի սպասարկման աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել ավտոկռունկ:

6. Կոմունալ ծառայությանը պատկանող ջրցան մեքենան օգտագործվել է երկար տարիներ և մեքենան շահագործելու համար կատարվում է հաճախակի նորոգում, որը պահանջում է մեծ ծախսեր: Վեդի համայնքի փողոցների լվացման, կանաչապատ տարածքների՝ սիզամարգերի, ծառերի ջրման համար անհրաժեշտ է նոր ջրցան մեքենա:

7. Շինթափոնների, աղբակույտերի հավաքման և բարձման համար անհրաժեշտ է մինի տրակտոր:

8. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Վեդու համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի բաժնի գործունեության առաջնային նպատակն է համայնքի բնակչությանը մատուցել որակյալ և ժամանակակից ծառայություններ՝ մշակութային,

սպորտային, նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտներում:

Վեդի համայնքում գործում է 21 դպրոց, որից 19 հիմնական, 2 ավագ: Ընդորում Գինեվետ և Նոր Ուղի բնակավայրերի համար գործում է մեկ դպրոց, որը տեղակայված է Գինեվետ բնակավայրում: Լուսաշող բնակավայրը չունի դպրոց, աշակերտները հաճախում են մոտակա բնակավայրերի ուսումնական հաստատությունները: Ավագ դպրոցներից մեկը գտնվում է Վեդի քաղաքային բնակավայրում, իսկ մյուսը՝ Ոսկետափում:

Գրեթե բոլոր դպրոցներում արձանագրվել են ամբողջական կամ մասնակի վերանորոգման կարիքներ, կա նյութատխնիկական թերհագեցվածություն: Որոշ ֆունդամենտալ առարկաների մասով կա ուսուցիչների անհրաժեշտություն: Դպրոցների սպորտ հրապարակները, դահլիճները հագեցած չեն համապատասխան միջավայրով և ինվենտարով: Առարկաներին կից լսարանները հագեցած չեն համապատասխան պարագաներով, լաբարատոր սարքավորումներով, դիդակտիկ նյութերով և սա կրում է գրեթե մասայական բնույթ: Դպրոցների մասին լրացուցիչ տեղեկատվությունը զետեղված է «Բնակավայրերի ամփոփ բնութագիր»[3] հավելվածում:

Համայնքում չկան միջին և բարձր մասնագիտական ուսումնական հաստատություններ: Դպրոցի շրջանավարտները հետագա ուսումնառությունը շարունակում են Արարատի մարզում և Երևանում:

Վեդի համայնքում գործում է 13 մանկապարտեզ, որոնց մասին քանակական տվյալները ներկայացվում է ստորև աղյուսակում:

Վեդի համայնքի նախադպրոցական, արտադպրոցական կազմակերպությունների, հանրակրթական ՊՈԱԿ-ների վերաբերյալ ցուցանիշներ

Աղյուսակ 1՝

[3] Տես՝ «Բնակավայրերի ամփոփ բնութագիր» հավելվածը

հ/հ	Կազմակերպության անվանումը	Կազմակերպության հասցեն	քանակը	Խմբերի քանակը	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը	Մանկավարժների թիվը	Գրքայի ֆոնդ	Աշակերտների թիվը	Ուսանողների թիվը
1	«Վեդու N1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	ք.Վեդի Պուշկինի 7 մանկապարտեզ	1	4	128	19	6	X	x	x
2	«Վեդու N2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	ք.Վեդի Կասյան 26/17 մանկապարտեզ	1	5	155	23	10	X	x	x
3	«Վեդու N3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Արարատյան 81 մանկապարտեզ	1	5	157	24	10	X	x	x
4	«Տափերական մանկապարտեզ» ՀՈԱԿ	Իսակով 2	1	4	115	24	12	X	x	x
5	Փոքր Վեդու «Զարթոնք» մանկապարտեզ» ՀՈԱԿ	Մ. Հովհաննիսյան 24	1	4	130	25	12	X	x	x
6	«Լուսառատի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Բաղրամյան 1	1	5	149	25	10	X	x	x
7	«Նոր Կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Վ. Մամիկոնյան 12	1	2	52	13	5	X	x	x
8	«Եղեգնավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Ա. Խանջյան 12 մանկապարտեզ	1	4	109	24	7	X	x	x
9	Այգավանի ժպիտ ՀՈԱԿ	Գառնիկ Ղուկասյան 3	1	4	120	25	11	X	x	x

10	Վանաշենի մանկապարտեզ ՀՈԱԿ	Կ. Ալոյան 24	1	3	93	14	5	X	x	x
11	«Ոսկետափի մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հ. Աբելյան 5	1	4	120	25	9	X	x	x
12	Գոռավանի Գոռ մանկապարտեզ	Գ. Մարզպետունի 7	1	3	50	16	4	X	x	x
13	Դաշտաքարի մանկապարտեզ ՀՈԱԿ	Դաշտաքար 4 փողոց 2/1	1	1	28	9	2	X	x	x
	Նախադպրոցական հիմնարկներ		13	49	1424	269	105	X	x	x
1	Վեդու երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	Սարիբեկ Վարդանյանի Ք. Վեդի	1	8	158	29	25	X	x	x
2	«Վեդու Գեղարվեստի դպրոց» արտադպրոցական, կըրթադաստիարակչական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	Վեդու Գեղարվեստի դպրոց	1	16	205	27	16	X	x	x

Համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներն ապահովված են մասնագիտական կադրերով,

որոնց շնորհիվ հաջողվում է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը:

Վեդու համայնքապետարանի ենթակայությամբ գործում է 9 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որոնց գործունեության նպատակը համայնքի երեխաների ներդաշնակ զարգացման և դաստիարակության ապահովումն է: Մանկապարտեզ հաճախում է 1462 երեխա,(արական՝ 786,իգական՝ 676):

Մանկապարտեզների հիմնախնդիրներն են՝

1. Հոգեբանի և լոգոպեդի հաստիքների ավելացում,
2. կրտսեր և միջին նոր խմբերի բացում,
3. կադրային համալրվածություն,
4. օդափոխության համակարգի տեղադրում խոհանոցներում,
5. բակերի, խաղահրապարակների գույքի պարբերական նորոգում և թարմացում,բաց և փակ տաղավարների ավելացում, մարզական գույքի ձեռքբերում,
6. խմբասենյակների գույքի թարմացում,
7. N2 մանկապարտեզի պատշգամբների վերանորոգում,
8. N6 մանկապարտեզի դռների և պատուհանների ձեռքբերում,
9. N10 մանկապարտեզի հիմնանորոգում,
10. բժշկական սենյակների համապատասխանեցում պահանջվող նորմատիվներին,
11. նոր գույքի և անկողնային պարագաների ձեռքբերում՝ նոր ընդունվող երեխաների քանակով (պահարան, մահճակալ, աթոռ,սեղան,անկողին,անկողնային սպիտակեղեն և սրբիչ)
12. դիդակտիկ նյութերի և խաղալիքների ձեռքբերում,
13. ոռոգման համակարգերի նորոգում:

Չնայած վերոհիշյալ փաստերին, հաշվի առնելով Վեդի համայնքի բնակչության զբաղվածությունը գյուղատնտեսության բնագավառում աշխատանքների եռուն շրջանում՝ մշտապես կարիք կա մանկապարտեզների սաների ընդգրկվածության ավելացման,որի համար էլ անհրաժեշտեն լրացուցիչ ինժիներական աշխատանքներ:

Վեդու համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական հաստատություններն են՝ «Վեդու Մարտին Վարդանյանի անվան մարզադպրոց», «Վեդու երաժշտական դպրոց»,«Վեդու գեղարվեստի դպրոց»:

Վեդու համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական հաստատությունների գործունեության նպատակն է՝ ստեղծել երեխաների հետաքրքրությունների և ունակությունների զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, նպաստել նրանց գեղագիտական և ֆիզիկական զարգացմանն ու դաստիարակությանը, գիտելիքների ձեռքբերմանը: Արտադպրոցական ուսումնական ՀՈԱԿ-ների սաները պարբերաբար մասնակցում են տեղական, մարզային, հանրապետական և միջազգային նշանակության մրցաշարերի, ցուցահանդեսների, փառատոների և արժանանում գլխավոր մրցանակների:

«Վեդու երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունն ՀՈԱԿ-ը գործում է առանձին մասնաշենքում, ուր գործում են հետևյալ բաժինները.

հ/հ	Ցուցանիշների անվանում	Չափի միավոր	Քանակ
1	Աշխատակիցների թիվը	Մարդ	29
1.1	Մանկավարժներ	Մարդ	25
2	Աշակերտների թիվը	Երեխա	158
3	Խմբերի թիվը	Հատ	8
3.1	Դաշնամուրային բաժին	Երեխա	72
3.2	Կիթառ	Երեխա	12
3.2.1	Ջութակ	Երեխա	9
3.2.2	Վոկալ	Երեխա	20
3.2.3	Կլարնետ	Երեխա	9
3.2.4	Դհոլ	Երեխա	13
3.2.5	Դուդուկ	Երեխա	10
3.2.6	Քանոն	Երեխա	13

Վեդու երաժշտական դպրոցի հիմնախնդիրներն են՝

1. շենքի ներքին վերանորոգում,
2. տանիքի վերանորոգում,
3. նկուղային հարկում կաթսայատան ջեռուցման համակարգի ջրի մատակարարման խողովակաշարի հիմնովին փոխարինումնորով,
4. դաշնամուրների և ռոյալի, փողային գործիքների՝ ֆլեյտայի,շեփորի,կլառնետի,սաքսոֆոնի ձեռքբերում,
5. դպրոցի գրադարանի երաժշտական գրականության համալրում,
6. գրասենյակային գույքի արդիականացում:

«Վեդու գեղարվեստի դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունն ՀՈԱԿ-ը գործում է առանձնացված մասնաշենքում, որտեղ դասավանդվում են հետևյալ առարկաները.

հ/հ	Ցուցանիշների անվանում	Չափի միավոր	Քանակ
1.	Աշխատակիցների թիվը	մարդ	27
1.1	Մանկավարժներ	մարդ	16
2.	Դասարանների թիվը	հատ	16
2.1	1-ին դասարան -	աշակերտ	63
2.2	2-րդ դասարան -	աշակերտ	44
2.3	3-րդ դասարան -	աշակերտ	28
2.4	4-րդ դասարան -	աշակերտ	18
3.	5-րդ դասարան -	աշակերտ	23
3.1	6-րդ դասարան -	աշակերտ	11
3.2	7-րդ դասարան -	աշակերտ	18
3.3	ընդհանուր թիվը	աշակերտ	205

«Վեդու գեղարվեստի դպրոցը պարբերաբար կազմակերպում է համայնքի շնորհալի երեխաների աշխատանքների ցուցահանդեսներ, արժեքավոր

ցուցանմուշներով մասնակցում համայնքային, մարզային, հանրապետական միջոցառումներին:

«Վեդու գեղարվեստի դպրոց»ՀՈԱԿ-ի հիմնախնդիրներն են՝

1. ցուցասրահի և նախասրահի բացակայություն,
2. մոլբերտների, տումբաների, աթոռակների, նատյուրմորտի սեղանների, գիպսե օռլամենտների և այլ դիդակտիկնյութերի սակավություն,

3. խեցեգործության և քանդակագործության արվեստանոցների մասնագիտական կահավորում, լուսային և

հ/հ	Ցուցանիշների անվանում	Չափի միավոր	Քանակ
1.	Աշխատակիցների թիվը	մարդ	12
1.1	Գրադարանավարներ	մարդ	8
3.	Ընթերցողների ընդհանուր թիվը	մարդ	3433
3.1	Աղջիկներ	մարդ	2100
3.2	Տղաներ	մարդ	1333

երաժշտական տեխնիկայի, պրոյեկտորի ձեռքբերում:

«Վեդու համայնքային գրադարան» մշակույթային հաստատություն ՀՈԱԿ-ը գործում է առանձնացված մասնաշենքում:

«Մարտին Վարդանյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը գործում է առանձին մասնաշենքում, որտեղ յոթ մարզաձևերով մարզվում են Վեդի քաղաքի և հարակից բնակավայրերի երեխաները: ՀՈԱԿ-ի ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

հ/հ	Ցուցանիշների անվանումը	Չափի միավոր	Քանակ
1.	Աշխատակիցների թիվը	Մարդ	18
1.1	Մանկավարժներ	Մարդ	8
2.	Խմբերի քանակը	Խումբ	7

3.	Խմբերի տեսակները այդ թվում՝		
3.1	Բասկետբոլ	աշակերտ	12
3.2	Կառատե	աշակերտ	15
3.3	ազատոճի ըմբշամարտ – 1 խումբ	աշակերտ	20
3.4	Ֆուտբոլ	աշակերտ	35
3.5	Հունա-հռոմեական ըմբշամարտ	աշակերտ	11
3.6	ծանրամարտ – 1խումբ	աշակերտ	14
3.7	նցքամարտ – 1խումբ	աշակերտ	13

Չնայած գործուն վիճակին՝ մարզադպրոցում առկա են հետևյալ հիմնախնդիրները. Մասնաշենքի կապիտալ վերանորոգում (տանիք, դռներ, պատուհաններ, սանհանգույց, ջեռուցման համակարգ), տեխնիկական վերազինում: Մարզադպրոցին կից գործում է մարզադաշտ, որն ունի լուսավորության, ոռոգման ջրի, պահեստային նստարանների, խոտհնձիչի, գծման սարքավորման, սպորտ-կոմպլեքսի կարիք:

Վեդի քաղաքի մարզադաշտից բացի, անհրաժեշտ է անդրադառնալ նաև հարակից բնակավայրերի՝ Այգավան և Ոսկետափ ֆուտբոլային դաշտերի կառուցմանը և բարեկարգմանը՝ խոտերի կարճացում, տարածքի մաքրության պահպանում՝ հիմք ընդունելով երիտասարդության ակտիվությունը, քանի որ վերջիններս կարող են դառնալ բացառիկ կադրեր՝ երկիրը ազգային, միջազգային առաջնությունում պատվովներկայացնելու համար:

Վեդի համայնքում կրթության, մշակույթի և սպորտի զարգացման նպատակով համայնքի աշխատակազմի կողմից պլանավորված է ակտիվացնել համագործակցությունը պետական մարմինների, միջազգային

կազմակերպությունների, ոլորտում ներգրավված այլ դերակատարների հետ:

IV. ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Վեդի համայնքի աշխարհագրական դիրքը, բնակչության, բնակլիմայական, պատմամշակութային ուրույն առանձնահատկությունները, առկա մասնագիտական, արտադրական ռեսուրսները հիմք են ստեղծում հստակ նպատակ սահմանել ապահովելու համայնքի բնականոն զարգացումը, այն դարձնել առավել բարեկեցիկ, անվտանգ և ապահով համայնքի բնակիչների և էլ ավելի գրավիչ զբոսաշրջիկների համար:

Մենք նպատակադրված ենք նպաստել առողջ և վստահելի ներդրումային, տնտեսական և բիզնես միջավայրի ձևավորմանը: Ակնկալում ենք փոխադարձ վստահության և արդյունավետ համագործակցության շնորհիվ բազմապատկել արդեն իսկ առկա տեղական և արտասահմանյան ներդրումների ծավալը, խրախուսել տեղական արտադրությունը, համագործակցությունը գործարար միջավայրի հետ:

Մեծ կարևորություն է տրվելու զբոսաշրջության աշխուժացմանը, որը կհանդիսանա լրացուցիչ խթան սպասարկող ենթակառուցվածքների և տեղական արտադրության զարգացմանը,ինչն ուղղակիորեն ենթադրում է նաև գյուղատնտեսության, մշակույթի, արվեստի, արհեստագործության և այլ ոլորտների առաջընթաց:

Տարածքում նպատակային է նաև առողջապահական տուրիզմի զարգացման հնարավորությունների ստեղծումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ակնկալվում են ներդրումներ և համագործակցություն տեղական և արտասահմանյան ընկերությունների հետ, ինչն իր հերթին կարող է նպաստել արդյունաբերության,հատկապես՝ ռազմարդյունաբերության, ռոբոտաշինության և այլ հարակից ոլորտների կտրուկ զարգացմանը: Այս ամենը ենթադրում է բնակության համար սոցիալ-տնտեսական և կենցաղային պայմանների կտրուկ բարելավում և ապագայում բնակչության թվի հաստատունացում:

V. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է՝ հանրային կյանքը կարգավորող, սպասարկող բոլոր ոլորտների,բնագավառների համահունչ և դինամիկ զարգացման շնորհիվ բարձրացնել Վեդի համայնքի ազգաբնակչության բարեկեցության մակարդակը, դիմակայունության ունակությունները,ինստիտուցիոնալ երաշխիքներ ապահովել համայնքի կայուն զարգացման համար:

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ/ՈԼՈՐՏՆԵՐԻ

1.1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ,ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի բնակավայրերում ճանապարհների ասֆալտապատման խնդրի առնվազն մասնակի լուծում, դաշտամիջյան ճանապարհների բարելավում,ինչպես նաև ճանապարհամերձ հատվածների ջրահեռացման և ջրատար առուների վերականգնում և մաքրում:
- Խմելու և ոռոգման ջրագծերի բարեկարգում և հիմնանորոգում,նոր համակարգերի կառուցում համայնք-պետության համագործակցության բանաձևի գերակայությամբ:Այս ամենին զուգահեռ Վեդու ջրամբարը ապահովելու է ինքնահոս ոռոգման ջրի պահանջարկի մեծ մասը:
- Համայնքի որոշ բնակավայրերում՝ հատկապես դպրոցամերձ,մանկապարտեզների,համայնքային այլ ենթակառուցվածքներին կից ճանապարհների մայթերի բացակայության լրացում՝ երթևեկության անվտանգությունը ապահովելու նպատակով:
- Բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգում,նոր մանկական խաղահրապարակների կառուցում:
- Բազմաբնակարան բնակելի շենքերի էներգախնայողության բարձրացում:
- Համայնքն ավելի մատչելի դարձնելու նպատակով թեքահարթակների կառուցում:

1.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Գյուղատնտեսական հարաբերությունների ազատականացում՝ համակարգման և կանխատեսելի կառավարման համատեքստում:
- Գյուղատնտեսական տեխնոպարկերի հիմնում և շահագործում:
- Վստահության կամիրավական հիմքերով արտադրական, գյուղատնտեսական կոոպերացիաների, միավորումների ստեղծում:
- Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման, աշխատատեղերի և սոցիալական խնդիրների լուծման համար համայնք-պետություն մասնավոր համագործակցությամբ ներդրումների իրականացում՝ «ՀԱՄԱՅՆՔ» ՓԲԸ-ների ստեղծում, որոնք գործունեություն կծավալեն արտադրության ու ծառայությունների մատուցման, արտադրված գյուղմթերքների իրացման և վերամշակման, համայնքում ձեռնարկատիրության զարգացման, ինչպես նաև համայնքային գույքի նպատակային օգտագործման ուղղություններով:

1.3 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏ

- Վեդի համայնքի բոլոր թաղամասերի և բազմաբնակարան շենքերի բակերի արտաքին լուսավորության ցանցի վերազինում նոր տիպի «ԼԵԴ» տնտեսողլուսատուներով:
- Համապետական մաշտաբի առևտրատնտեսական լոգիստիկ կենտրոնի ստեղծման խթանում՝ համայնքի տարածքում առևտուրը և սպասարկումը կանոնակարգելու, ավելի քաղաքակիրթ դարձնելու նպատակով:
- Համայնքի հասարակական տրանսպորտի կանգառների բարեկարգում և համալրում:
- Համայնքի ուսանողների համար կրթությունն ավելի հասանելի դարձնելու նպատակով՝ համայնքի բնակավայրերին անվճար ուսանողական տրանսպորտի տրամադրում:
- Վեդի-Երևան տրանսպորտային կապի բարելավում:

1.4 ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Սանիտարական մաքրման և աղբահանության ոլորտին առնչվող բարեփոխումների իրականացում:
- Ժամանակակից մեքենաներով և տեխնիկայով հագեցած կոմունալ սպասարկման ՀՈԱԿ-ի հիմնում:
- Էկոլոգիապես առավել անվտանգ աղբավայրի ստեղծում:
- Նոր,ավելի հարմարավետ աղբամաններ տեղադրում:
- Համայնքի կանաչապատում, նոր կանաչապատ տարածքների ստեղծում:

1.5 ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- Համայնքում զարգացման և զբոսաշրջության կենտրոնների հիմնում:
- Համայնքային զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում՝ ձևավորելով «Խոր Վիրապ-Խոսրովի արգելոց-Գևորգ Մարզպետունի բերդամրոց-Վեդու ջրամբար-Հրեշտակների ձոր-Սուրբ Կարապետ» զբոսաշրջային գոտին:
- Զբոսաշրջիկների նախասիրությունների ուսումնասիրության համապատասխան միջոցառումների իրականացում:
- Համայնքի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում:
- Ագրոտուրիզմի զարգացման խթանում:

1.6 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

- Համայնքի մշակութային օջախների հիմնանորոգում և անհրաժեշտգույքով համալրում:
- Մշակութային ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանն ուղղված աշխատանքների ակտիվացում:
- Մշակութային ոլորտի հաստատությունների գործունեության բարելավման,արվեստի և երաժշտական դպրոցներում ուսուցման մատչելիության և

հասանելիության ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացում:

➢ Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նոր մանկապարտեզների կառուցում և գոյություն ունեցողների գործունեության պայմանների բարելավում:

➢ Միջնակարգ դպրոցների հետ սերտ համագործակցություն և թիրախային աջակցություն:

1.7 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

➢ Տարբեր մրցույթներում մասնակցող և պատվավոր տեղեր զբաղեցրած սաներին և լավ արդյունք գրանցած մարզիչներին խրախուսում:

➢ Մարզադպրոցում գործող խմբակների քանակի ընդլայնում:

➢ Ներհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպում, որտեղ կխրախուսվի առողջ ապրելակերպի գաղափարը և ֆիզիկական դաստիարակությունը:

➢ Հաշմանդամություն ունեցող անձանց համարհատուկ մրցաշարերի կազմակերպում:

1.8 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում սոցիալական նպաստների առավել թիրախային տրամադրում, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում բնակիչներին որոշակի աջակցության տրամադրում:

➢ Աջակցություն համայնքի բազմազավակ անապահով ընտանիքներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց,զոհված ազատամարտիկների հարազատներին:

VI. ՄՈՆԻԹՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Վեդի համայնքի 2022-2026 ՀՀԶԾ-ի ընթացքի նկատմամբ անհրաժեշտ մոնիթորինգը պլանավորվում է իրականացնել համանքի ավագանու, աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, համապատասխան պետական լիազոր

Հաղորդակցություն, տրանսպորտ և կապ	Բնակչության ակտիվ հաղորդակցություն գյուղապետարանի հետ,տարբեր կայանների առկայություն(ինտերնետի), Ուսանողական անվճար ավտոբուսի առկայություն	Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում, անվտանգ երթևեկության կազմակերպում /գետնանցումի վերանորոգում/	Ասֆալտապատում, խճապատում	Վթարների հավանականություն

Առևտուր և ծառայություն	Անցում առևտրի և սպասարկման առավել քաղաքակիրթ մեթոդների	Սանիտարահիգիենիկ վիճակի բացակայություն	Ուսումնասիրություններ և մշտական աշխատանք առևտրի և սպասարկման օբյեկտների հետ:	Հակահիգենիկ սննդի մատակարարում
Կրթություն	Մի քանի կրթօջախների առկայություն	Կրթական ոլորտի բարեփոխումների կարիք	Բարձորակ մասնագետների առկայություն: Հիմնական դպրոցի վերանորոգում	Ազգային գաղափարախոսության պակաս
Մշակույթ	Գործում է մշակույթի տուն պարի խմբերով և Վեդու երաժշտական դպրոցի մասնաճյուղ. գրադարանի առկայություն	մշակույթի տան և գրադարանի ոչ բարվոք վիճակ, աշխույժ մշակութային կյանքի բացակայություն	Ավելացնել նոր խմբակների տեսակներ, վերանորոգել, կահավորել մշակույթի տան սենյակները	Ազգային մշակույթի պակաս
Երիտասարդություն	Իրավունքի լիարժեք տիրապետում	Զբաղվածության պակաս	Կրթելու հնարավորություն	Աշխատատեղերի բացակայություն
Առողջապահություն	Բուժամբուլատորիայի	Նեղ մասնագետների բացակայություն, Բուժամբուլատորիայի	Բուժարքավորումների ավելացում,	Բուժսպասարկման վերահսկողություն

	առկայություն	առանձին շենքի և անհրաժեշտ սարքավորումների բացակայություն	ամբուլատորիայի առանձին շենքի կառուցում	
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Ֆուտբոլի դաշտի համար նախատեսված տարածք	Համայնքում բացակայում են մարզադպրոցներ, սպորտային հրապարակներ:	ֆուտբոլի դաշտի բարեկարգում, սպորտային համատեղ միջոցառումների իրականացում, ժամանակակից մարզախաղահրապարակային համալիրների կառուցման ծրագրերի իրականացում:	Հիվանդ սերունդ ունենալը
Աշխատանքի և սոցիալական ծառայություն	Սոցիալական ապահովության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը:	Համայնքի բնակչության սոցիալական ծանր վիճակ	Սոցիալական ապահովության ոլորտի հիմնական նպատակն է նպաստել համայնքում բնակչության աղքատության նվազեցմանն ու հաղթահարմանը, մեծացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ծրագրերի հասցեականության մեծացման և նպատակային ծրագրերի իրականացման միջոցով, բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայություններ	Աշխատանքի բացակայություն

			մատչելիությունը և որակը:	
Գյուղատնտեսություն	Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, եգիպտացորենի, մի շարք բանջար-բոստանային կուլտուրաների՝ լոլիկի, վարունգի, պղպեղի, սմբուկի, ինչպես նաև խնձորի	Գյուղ մթերքի իրացման հետ կապված խնդիրներ, ոռոգման ջրի բարձր սակագին,թունաքիմիկատների ,պարարատանյութերի,սերմերի բարձր գին	Համայնքում գյուղմթերքի իրացումը կազմակրերպել, ոռոգման ցանցիվերանորոգում	Երաշտը, բնական աղետները

	, տանձի, դեղձի, ծիրանի , խաղողի մշակությամբ:			
Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն	Համայնքում աղբահանությունը կազմակերպվում է շաբաթը մեկ անգամ համայնքի հետ համագործակցող «Մաքուր երկիր» կազմակերպության տրանսպորտ	Տարբերակված աղբահանության համակարգի բացակայություն Բնակչության իրազեկության ցածր մակարդակ Փոքր աղբարկղերի բացակայություն	Գյուղապետարանի կողմից իրականացվող վերահսկողությունը անասնապահությամբ զբաղվողների աղբահանության աշխատանքների վրա	Շրջակա միջավայրի աղտոտում

	ային միջոցներով			
Արտաքին կապեր և հարաբերություններ	Համայնքը սերտորեն համագործակցում է Եվրասիա համագործակցության հիմնադրամի հետ ՀԱՄԱՏեղ - Հանրային մասնակցությունն տեղական ինքնակառավարման ծրագրի շրջանակներում	Միջազգային դոնոր կազմակերպությունների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվության հավաքագրման և նրանց հետ կոնտակտային կապերի ստեղծման անհրաժեշտություն	ներդրումային համատեղ ծրագրերի մշակում և իրականացում, համայնքի զարգացման գործում հանրային մասնակցության բարձրացում	

Բնակավայրի զարգացման տեսլականը

Ոսկետափ բնակավայրի տեսլականն է՝ ստեղծել բարգավաճող համայնք, որտեղ յուրաքանչյուր բնակիչ ունի իր տեղն ու դերը համայնքի զարգացման գործում և պատասխանատվություն է կրում համայնքի նկատմամբ: Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ, մաքուր և բնակիչների համար հաճելի բնակավայր:

ՀՁԾ Ֆինանսավորում

Կատարելով համայնքի 2022-2026թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել երեք հանգամանք՝

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել 2021թ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄՅՆՔ

ՈՒՐՑԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ուրցաձորն իր հարուստ ու բազմադարյա պատմության ընթացքում եղել է նախ

գավառ, գյուղաքաղաք, այնուհետև գյուղ և մտել է Այրարատ նահանգի մեջ: Միջնադարից հայտնի է Ուրծ անվամբ: Հնագույն բնակավայրն առանձնապես ծաղկում է ապրել 4-7-րդ դարերում: 9-րդ դարից գտնվել է արաբ նվաճողների լծի տակ: 11-12-րդ դարերում իրենց գերիշխանությունն են հաստատել սելջուկ-թուրքերը: Այստեղ կառուցված Առջարեկ վանքը եղել է միջնադարի մշակութային կենտրոններից մեկը, ուր ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Ծաղկուն ու բարգավաճ բնակավայր է դարձել 12-15-րդ դարերում: 13-15-րդ դարերում գավառը պատկանել է Պռոշյանի շխական տանը: 1427 թվականին գրված մի ձեռագիր հիշատակարանում, որպես գրչության վայր նշվում է Ուրծա վանքը: 1457 թվականի մի այլ ձեռագիր հիշատակարանում կան Ուրծի Սբ. Աստվածածին և Սբ.Ստեփանոս եկեղեցիների անունները: Թերի պահպանված մի խիստ արժեքավոր արձանագրության շնորհիվ հաջողվել է պարզել նաև Տափի վանք կոչված տեղը: Ներկայումս Գևորգ Մարզպետունի բերդ անվամբ հայտնի ամրոցի ներսում, եկեղեցու հյուսիսային պատին, 1256 թվականին փորագրած արձանագրության սկզբնամասում հիշատակվում է Տափ անունը: 15-րդ դարից բնակավայրին տիրել են թաթար-մոնղոլները: Իսկ ահա 17-19-րդ դարերում անցել է պարսկական տիրապետությանը: 1604 թվականին բնակչությունը տեղահանվել է պարսկական Շահ Աբասի կողմից: Ցարական Ռուսաստանին է պատկանել 1828 թվականին կնքված Թուրքմենչայի պայմանագրով, երբ Արևելյան Հայաստանը ռուս-պարսկական պատերազմի ավարտով վերջապես թոթափեց պարսկական լուծը: Գյուղը հիմնադրվել է 1873 թվականին: Նախկինում ունեցել է Կարաբաղլար Ներքին, Չիման, Ուրխաձոր անվանումները: Ուրցաձոր է վերանվանվել 1978 թվականին: Գյուղից

7 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է Խոսրովի անտառի արգելոցը, որտեղ կան 3 եկեղեցիների ավերակներ: Ուրցաձորի մոտակա Կոտուց սարի լանջին աղբյուրի մոտակահին գերեզման, որն ըստ ավանդության Խոսրով Բ թագավորի գերեզմանն է:

ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
	Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2022**
	Բնակչություն	Մարդ	3275
	Վարչական շրջանի տարածք	Հա	28985
	´Ý³Ï³í³ÛñÇ µÝ³Ï»ÉÇ	Հա	162
	¶ÛáõÕ³ïÝï»ëÏ³Ý ÑáÕ»ñ որից՝	Հա	13446
	í³ñ»É³ÑáÕ	Հա	757
	µ³½Ù³ÙÛ³ ïÝÏ³ñÏÝ»ñ	Հա	40
	åïÕ³ïáõ ³Û·Ç	Հա	39
	Ë³ÕáÕÇ ³Û·Ç	Հա	1.2
	ËáïÑ³ñÏ	Հա	-
	³ñáï	Հա	9730
	³ÛÉ ÑáÕï»ëù»ñ	Հա	2900
	փողոցների երկարություն որից՝	Կմ	12
	ասֆալտապատ	Կմ	1
	Կոմունալ տնտեսություն-		
	Բազմաբնակարան շենքեր	հատ	1
	Վերելակներ	հատ	-
	Վթարային շենքեր	հատ	-
	Անհատական բնակելի տներ	միավոր	600
	Փողոցային լուսավորություն որից՝	կմ	12
	ԼԵԴ (LED)	կմ	
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	10
	Բարեգործական ճաշարան	հատ	-
	Հյուրանոցներ	հատ	-
	Շուկաներ	հատ	-
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հատ	-
	Բակային խաղահրապարակներ	հատ	-
	Թեքահարթակներ	հատ	-
	Կրթություն և մշակույթ		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	1/ չի գործում/

	Երեխաների թիվը	երեխա	-
	Աշխատողների թիվը	մարդ	-
	Հանրակրթական դպրոց	հատ	1
	Երեխաների թիվը	երեխա	468
	Աշխատողների թիվը	մարդ	65
	Երաժշտական դպրոց	հատ	-
	Մարզադպրոց	հատ	-
	Արվեստի դպրոց	հատ	-
	Գրադարան	հատ	1
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հատ	-
	Հուշարձաններ	հատ	6
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	քմ	-
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հատ	1/ բուժ ամբուլ. /
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	-
	Զբոսաշրջություն		
	Տեսարժան վայրեր	հատ	3
	Պատմամշակութային վայրեր	հատ	3
	Եկեղեցիներ	հատ	1/Մատուռ/

Բնակավայրի ուժեղ և թույլ կողմերը

զարգացման հնարավորություններն ու ուղղությունները:

Առավելություններ	Թույլ կողմերը
• Համայնքում միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի, բուժ.ամբուլատորիայի, դեղատան առկայություն • Բնություն և լանդշաֆտ • Վայրի սննդային դեղաբույսեր • Էկոլոգիապես մաքուր հողը նպաստում է տարբեր տեսակի գյուղատնտեսական արտադրանքին • Մաքուր և առողջ կլիմա • Հսկայական հողատարածք, որը բարենպաստ է գյուղատնտեսության համար • Մաքուր խմելու ջուր • Միջհամայնքային լավ ճանապարհ • Համայնքային փողոցների արտաքին լուսավորում	• Ցածր և միջին եկամուտներ • Հողահունային ոռոգման համակարգ • Սահմանափակ թվով և հնացած գյուղատնտեսական մեքենաներ • Խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի և ներքին ցանցի վթարային վիճակ • Համայնքի կողմից ջրամատակարարաման անվերահսկելիություն • Ներհամայնքային ճանապարհների ոչ բավարար վիճակ • Կոյուղու բացակայություն • Թափոնների կառավարման բացակայություն • Առկա ռեսուրսների անարդյունավետ օգտագործում

• Կաթի և ծխախոտի մթերման կայանի առկայություն • Գործող մշակույթի տան առկայություն • Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն • Գիշերակաց տների առկայություն • Համայնքի տարածքում պատմամշակութային վայրերի առկայություն /Խոսրովի պետարգելոց, Գ. Մարզպետունու բերդ-ամրոց, , Մանկուք հնավայր և այլն/ • Խոտաբույսերի և դեղաբույսերի առկայություն	• Համայնքի մասնակի գազաֆիկացում • Ջրային ռեսուրսները սահմանափակում են գյուղատնտեսությունը
Հնարավորություններ	Վտանգներ
• Համագործակցություն միջազգային դոնորների և փորձագետների հետ • Գետի ստորերկրյա ջրերը օգտագործում • Առողջ սննդամթերքների և դեղաբույսերի արտադրություն և արտահանում • Կանաչ էկոշարժում • Միջազգային էկոտուրիզմ • Չորմրգերի /չրերի/ բիզնես • Կաթի,մսի և մրգերի վերամշակում • Օրգանական հողագործություն • Համեմունքների,Խոտաբույսերի և դեղաբույսերի փաթեթավորում և իրացում • Կավի հումքի արտահանում, կավագործության ճյուղի զարգացում • Նոր աշխատատեղերի ստեղծում	• Հանրապետությունում հնարավոր է դանդաղ սոցիալ-տնտեսական զարգացում • Բնության անկանխատեսելի վիճակ • Համայնքի բոլոր բնակավայրերից տարեցտարի շարունակվող արտագաղթ՝ իր բոլոր բացասական հետևանքներով

• Էկոտուրիզմի զարգացում և էկոտան ստեղծում • Նախատեսվում է համայնքում բարելավել արևային էներգիայով սնուցման հասանելիության աճ	

Հիմնախնդիրներ՝

a) 1. Ոռոգման ջրագծի կառուցում /կիսախողովակների տեղադրում/
b) 2. Փողոցների ասֆալտապատում՝ 11կմ
c) 3. Խորքային հորի կառուցում /սահմանամերձ գոտում/
d) 4. Փողոցների լուսավորում՝ 2կմ
e) 5. Սպանդանոցի կառուցում

				2022-2026թվականի նախատեսվող ծր
	Ծրագրի անվանումը	Համագործակցություն	Անմիջական նպատակը	2
1	Ոռոգցածր բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում		Կիսախողովակների տեղադրում գյուղատնտեսության զարգացում	բնա բնա հող
2	Ոռոգցածր բնակավայրի փողոցների ասֆալտապատում		Ասֆալտապատում մոտ 11կմ Տրանսպորտի ապահովշարժի	բնա բնակ
3	Ուրցածր բնակավայրում խորքային հորի կառուցում		Մոտ 250հա հողատարածքջրելու հնարավորությունն կստեղծվի	հող

4	Ուրցաձոր բնակավայրի փողոցների լուսավորություն		Մոտ 2կմ լուսավորություն Բնակիչների կենցաղի բարելավում	Բնա բնա
5	Ուրցաձոր բնակավայրում սպանդանոցի կառուցում		անասնապահության զարգացում	Բնա բնա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ՍԻՍԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վեդի համայնքի Սիսավան բնակավայրը գտնվում է Արարատյան հարթավայրում՝ Արարատի մարզկենտրոնից մոտ 15կմ, մայրաքաղաք Երևանից՝ մոտ 45կմ, իսկ Վեդի համայնքի վարչական կենտրոնից՝ մոտ 5կմ հեռավորության վրա: Սիսավան գյուղը, որը նախկինում կոչվել է Ենգիջաեղել էլքվաձ գյուղակ: 1928թ.-ին այստեղ բնակություն են հաստատում եղեռնից մազապուրծ եղած հայեր, ովքեր գաղթել էին Վանի Սխգայ, Մարմետ, Լեսկ, Հերեն, Բերդակ գյուղերից:

Հայրենական մեծ պատերազմից հետո գյուղում վերաբնակվեցին նախկինում Ղադռլու, Քեշվերան, Կարախաչ կոչվող գյուղերի բնակիչներից նաև Սալմաստից գաղթած տարագիր հայեր, ովքեր նախ գաղթել էին Եղեգնաձոր՝որտեղից և վերաբնակվեցին Սիսավանում: Սիսավան գուղում են վերաբնակվել Մարտունուց եկած 2ատ ընտանիքներ, որոնց ծնողները նույնպես գաղթականներ էին և թողել էին չքնաղ Մուշը:

Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 838-886 մ:

Կլիմայական պայմանները Սիսավան բնակավայրում և նրա շրջապատում բնութագրվում է հետևյալ կերպ.

1. Տարեկան միջին ջերմաստիճանը 11.9 ^{0}C
2. Օդի բացարձակ մինիմում ջերմաստիճանը -30 ^{0}C

3. Օդի բացարձակ մաքսիմում ջերմաստիճանը 42 ⁰C

4. Օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը -16 ⁰C

5. Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հյուսիս-արևմուտքից է: Տարեկան միջին արագությունը 2,3մ/վրկ:

6. Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 252մմ

Համայնքում հիմնականում զբաղվում են խաղողի, ծիրանի, դեղձի, հացահատիկի, բանջարանոցային կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական արտադրանքը իրացվում է մայրաքաղաքի, հանրապետության մյուս մարզերի շուկաներում:

Երբեմն, վաղ գարնանը տեղի է ունենում ցրտահարություն, որի պատճառով բերքի մեծ կորուստ է լինում: Բերքի կորստի պատճառ է հանդիսանում նաև գարուն-ամառ շրջանի կարկտահարությունը:

Անասնապահությամբ զբաղվողներն էլ դժվարություններ ունենում խոտի և խտացված կերի անբավարարության պատճառով:

Բնակավայրը չունի գերեզմանատուն, հուղարկավորությունները 1968 թվականից կատարվում են համայնքի տարածքին հարող, Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական մշակության համար ոչ պիտանի տարածքում:

ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
Ցուցանիշներ		Չափի միավոր	
	Բնակչություն	Մարդ	2227

	Վարչական շրջանի տարածք	Հ ա	**501,01**
	´Ý³Ï³í³ÛñÇ µÝ³Ï»ÉÇ	Հ ա	**100,778**
	¶ÛáõÕ³ïÝï»ëÏ³Ý ÑáÕ»ñ որից՝	Հ ա	**364,47**
	í³ñ»É³ÑáÕ	Հ ա	**91,25**
	µ³½Ù³ÙÛ³ ïÝÏ³ñÏÝ»ñ	Հ ա	**248**
	åïÕ³ïáõ ³Û·Ç	Հ ա	**161,77**
	Ë³ÕáÕÇ ³Û·Ç	Հ ա	**86,22**
	ËáïÑ³ñÏ	Հ ա	**0**
	³ñáï	Հ ա	**0,68**
	³ÛÉ ÑáÕï»ëù»ñ	Հ ա	**24,53**
	փողոցների երկարություն որից՝	Կ մ	**15,24**
	ասֆալտապատ	Կ մ	**2,3**
	Կոմունալ տնտեսություն		
	Բազմաբնակարան շենքեր	հ ատ	**1**
	Վերելակներ	հ ատ	**0**
	Վթարային շենքեր	հ ատ	0
	Անհատական բնակելի տներ	մ ի ավ ո ր	425
	Փողոցային լուսավորություն որից՝	կ մ	9,7
	ԼԵԴ (LED)	կ մ	2,2
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հ ատ	6
	Բարեգործական ճաշարան	հ ատ	0
	Հյուրանոցներ	հ ատ	0
	Շուկաներ	հ ատ	0
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հ ատ	0
	Բակային խաղահրապարակներ	հ ատ	1
	Թեքահարթակներ	հ ատ	1
	Կրթություն և մշակույթ		
	Նախադպրոցական հաստատություններ	հ ատ	0
	Երեխաների թիվը	ե ր ե խ ա	0
	Աշխատողների թիվը	մ ա ր դ	0
	Հանրակրթական դպրոց	հ ատ	1
	Երեխաների թիվը	ե ր ե խ ա	284
	Աշխատողների թիվը	մ ա ր դ	47
	Երաժշտական դպրոց	հ ատ	0
	Մարզադպրոց	հ ատ	0
	Արվեստի դպրոց	հ ատ	0
	Գրադարան	հ ատ	1
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հ ատ	0
	Հուշարձաններ	հ ատ	2
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	ք մ	3700
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հ ատ	1

	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	0
	Զբոսաշրջություն		0
	Տեսարժան վայրեր	հատ	0
	Պատմամշակութային վայրեր	հատ	0
	Եկեղեցիներ	հատ	0

Բնակավայրի ուժեղ կողմերը

-Բնակավայրն ունի բարձրագույն ուսումնական հաստատություններից ավելի քան 175 շրջանավարտ, տարբեր մասնագիտություններից,ովքեր կարող են կազմակերպել բնակավայրում տարբեր բնագավառների հետ կապված աշխատանքներ
- Բնակավայրում մեծ աշխատուժի առկայությունն
-Բնակավայրում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը

-Բնակավայրի համեմատաբար բարենպաստկլիման

-Բնակավայրում ոռոգման ջրի առկայությունը, անջրտի հողերի բացակայությունը

- Հիմնական փողոցների գիշերային լուսավորվածության ապահովվածությունը

- Բնակավայրում գազամատակարարման առկայությունը

- Բնակավայրում արտադրված գյուղատնտեսական մթերքը Արտաշատև Երևան քաղաքի

շուկաներում սպառելու հնարավորությունը

Բնակավայրի թույլ կողմերը

-Ճանապարհների, ոռոգման ջրի ցանցերի անմխիթար վիճակ
- Միջնակարգ դպրոցի հիմնանորոգման անհրաժեշտություն, որի բացակայությունը կարող է հանգեցնել մատաղ սերնդի առողջության քայքայմանը -Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության բարձր մակարդակը, -Գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի բարձր լինելու պատճառով դրանց իրացման ծավալների նվազեցումը, գյուղացու եկամուտների նվազումը,
- Մանկապարտեզի, բուժմանկաբարձական կետի շենքերի բացակայություն
- Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
- Ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) բացակայություն
- Բնակավայրում աշխատատեղերի խիստ պակաս, գործազրկության բարձր մակարդակ
-Բնակավայրում սոցիալ ապես խոցելի ընտանիքների մեծ թիվ
- Բնակավայրում տարեցտարի շարունակվող արտագաղթ՝ իր բոլոր բացասական հետևանքներով
-Դաշտամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը, ինչը խոչընդոտում է գյուղատնտեսական աշխատանքների ճիշտ ժամանակին իրականացմանը:

Բնակավայրի հնարավորությունները

- Մեծ աշխատուժի առկայություն
- Ուղղակի ընտրություններով խոշորացված համայնքի ղեկավարի ընտրության հանրավորություն

Բնակավայրին սպառնացող վտանգները

- Բնակավայրում ոռոգումը իրականացվում է ինքնահոս եղանակով, կիսախողովակները ունեն փոխման և հիմնանորոգման կարիք, որի բացակայության դեպքում ավերվում են

դաշտամիջյան ճանապարհները, մեծանում են ջրի կորուստները:

- Աղբամանների բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Բնակավայրում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Բնակավայրի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:

ՍԻՍԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

.Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության բարձր մակարդակը.
.Գյուղատնտեսական մթերքների իրացման,շուկայական ցածր գների պատճառով գյուղացու եկամուտների նվազում.
.Մանկապարտեզի շենքի բացակայություն.
.Միջհամայնքային,ներհամայնքային ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների և փողոցների բարեկարգում.
.Ջրահեռացման կենտրոնացված համակարգերի /կոյուղու/բացակայությունը.
.Բնակավայրում աշխատատեղերի խիստ պակասը,գործազրկության բարձր մակարդակը;
.Բնակավայրում տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով.
.Ներհամայնքային փողոցների ասֆալտապատում
.Մշակույթի տան հիմնանորոգում

	Ծրագրի անվանումը	Համագործակցությունը	Անմիջական նպատակը	Հիմնական շահառուները	Սկիզբը և ավարտը	Ֆինանսավորման աղբյուր
1	Բնակավայրի որոշ հատվածներում խմելու ջրագծերի անցկացում, գործող ցանցի վերանորոգում	Վեդու համայնքապետարան ՀՀ կառավարություն	Բնակավայրի որոշ հատվածներում խմելու ջրագծերի անցկացում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե, պետ. բյուջե
2	Մշակույթի տան հիմնանորոգում	Վեդու համայնքապետարան, ՀՀ կառավարություն	Բնակավայրի բարեկարգում և բարելավում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե, պետ. Բյուջե
3	Միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	Վեդու համայնքապետարան, ՀՀ կառավարություն	Բնակավայրի բարեկարգում և բարելավում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե,
4	Լուսավորության ցանցի անցկացում որոշ փողոցներում	Վեդու համայնքապետարան,	Բնակավայրի բարեկարգում և բարելավում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե,
5	Ֆուտբոլային մարզադաշտի կառուցում	Վեդու համայնքապետարան, ՀՀ կառավարություն	Բնակավայրի բարեկարգում և բարելավում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե, պետ. Բյուջե
6	Ջրահեռացման կենտրոնացված համակարգի կառուցում և անցկացում	Վեդու համայնքապետարան, ՀՀ կառավարություն	Բնակավայրի բարեկարգում և բարելավում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե, պետ. Բյուջե
7	Բնակավայրի ներսում ճանապարհների ասֆալտապատ հատվածի ընդլայնում, դաշտամիջյան	Վեդու համայնքապետարան, ՀՀ կառավարություն	Ասֆալտապատ ճանապարհների ընդլայնում	Բնակավայրի բնակիչներ		Վեդու համայնքապետարանի բյուջե, պետ. Բյուջե

	ճանապարհների հարթեցում					

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ՎԱՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վանաշեն վարչական բնակավայրը գտնվում է Արարատի մարզկենտրոնից 16կմ հեռավորության վրա՝ Վեդի գետի ափին,ծովի մակարդակից բարձր է 870մ: Վանաշենը հիմնվել է 1873թ : Նախկինում ունեցել է Թաքդամ, Թայթան, Տայտան անվանումները: 1978թվականին վերանվանվել է Վանաշեն: Բնակչության մեծամասնությունը հայեր են,որոնք 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Վան -Վասպուրականից, 1940-ական թթ Պարսկաստանից և Սիրիայից ներգաղթածներն են: 1988-1989թթ. Ադրբեջանից Վանաշեն է ներգաղթել 138 հայ բնակիչ: Գյուղն ունի դպրոց,մանկապարտեզ, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, փոստի բաժանմունք: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, հիմնական զբաղմունքը հողագործությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 364 հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ:Գյուղում բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, խաղողագործությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի, խմելու ջրի, ճանապարհների վերանորոգման և գյուղմթերքների վերամշակման ձեռնարկության հիմնախնդիրները:2016թ.ապրիլյան քառօրյա մարտերին ունեցել ենք կամավոր

մասնակիցներ: 44-օրյա պատերազմին Վանաշեն գյուղը իր ակտիվ մասնակցությունն է ունեցել, որի հետևանքով ունեցել ենք 1զոհ,1անհետկորած և վիրավորներ: Վանաշեն բնակավայրի բնակչությունը 2022թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2636մարդ:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանշներ	Վանաշեն համայնք	
	Չափիմիավոր	2022
Առևտրի օբյեկտներ	հատ	9
Հանրային սննդի օբյեկտներ	հատ	1
Հյուրանոցային համալիրներ	հատ	0
Գյուղական արտադրանքի շուկաներ	հատ	0
Սգոսրահներ	հատ	0
Տեխնիկական հեղուկներ վաճառող օբյեկտներ	հատ	0
Հեղուկվառելիքի մանրածախ առևտուր	հատ	0
Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի օբյեկտներ	հատ	0
Տաքսի ծառայություններ	հատ	0

Հիմնախնդիրներ՝

a) Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետներն անցած,ոչ ընթեռնելի պիտանության ժամկետով, պիտանիության ժամկետի կրկնակի մակնանշմամբ,արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված և նոր ժամկետի նշումով ապրանքի վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացում:
b) Առևտրի և գովազդի ծառայությունների ոլորտում սպասարկման որակի բարձրացում էլեկտրոնային համակարգի ներդրման միջոցով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանշներ	Արտաշատի համայնք	
	Չափիմավոր	2022
Բնակչության թիվը	մարդ	2636
Սոցիալ ապես անապահովներ	%	58
Հաշմանդամներ՝		70
1-ին խումբ	մարդ	0
2-րդ խումբ	մարդ	35
3-րդ խումբ	մարդ	30
Մանկուց հաշմանդամ երեխաներ	մարդ	5
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	մարդ	
Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	մարդ	
Կենսաթոշակառուներ	մարդ	
3երեխաունեցող տնային տնտեսություններ		
4երեխաունեցող տնային տնտեսություններ		
5երեխաունեցող տնային տնտեսություններ		

Հիմնախնդիրներ՝

a) Աջակցել զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամ զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը,
b) Ձեռնարկել միջոցներ սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին՝ օգնել ու հայտնաբերել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իրենց կարողությունները,
c) Նպաստել համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ,

d) Անհրաժեշտության դեպքում բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստել և բժշկական հանձնաժողովին ներկայացնել միջնորդագրեր պետպատվերների համար:

2022-2026թվականի նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանումը	Համագործակցություն	Անմիջական նպատակը	Հիմնական շահառուները	Սկիզբը և ավարտը	Ֆինանսավորման աղբյուր
1	Խմելու ջուր		Կարգավորել Վանաշեն բնակավայրի որոշ փողոցների խմելու ջրի մատակարարման հարցը	Վանաշեն բնակավայր	2022-2026թթ.	
2	Գազը		Կարգավորել փողոցների գազի մատակարարման աշխատանքները	Երկու փողոցների գազաֆիկացում	2022-2026թթ.	
3	Տարեցների և սոցիալապես անապահովների		Հասարակության մեջ առաջ բերել դրական սոցիալական փոփոխություններ՝ տարեցներին և սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել աջակցություն.	Վանաշեն բնակավայրի միայնակ ապրող տարեցներ և անապահով ընտանիքներին ովքեր չեն կարող ինքնուրույն հոգալ իրենց կարիքները և ունեն սոցիալական աջակցության կարիք	2022-2026թթ.	

4	Վանաշեն-Այգավան		Երկու բնակավայրերն իրար միացնող ճանապարհների խնդիրը	Երկու բնակավայրերն իրար միացնող ճանապարհների ասֆալտապատման, կանաչ ապատման և լուսավորության խնդիրը		
5	Խաղահրապարակ		Վանաշեն բնակավայրում կառուցել խաղահրապարակ	Վանաշեն բնակավայրում կառուցել խաղահրապարակ		
6	<<Վանաշեն>>Մանկապարտեզի և մշակույթի տան վերանորոգում		Վերանորոգել <<Վանաշեն>>մանկապարտեզի III մասնաշենքը, ցանկապատը և խաղահրապարակը	Ունենք գույքի խնդիր տրամադել համապատասխան գույքերը		
7	Փողոցների լուսավորության և ասֆալտապատում		Վանաշեն բնակավայրում ունենք 4 չլուսավորված փողոցներ ինչպես նաև 1ոչ ամբողջությամբ ասֆատապատված և 28փողոցու 4 նրբ. չասվատապատված	Վանաշեն բնակավայրում ապահովել հետևյալ պահանջները		
8	Վանաշեն բնակա		Հիմնովի վերանորոգում ինչպես նաև	Հիմնովի վերանո		

	Վայրի Մշակույթի տանտարածքը		Բակի սալիկապատում	Ոռոգում ինչպես նաև բակի սալիկապատում		
9	Հորքայի հորերի վերանորոգումև կառուցում		Վանաշեն բնակավայրի ունի 4հորքայի հոր, որոնք ունեն վերանորոգման կարիքևևս 2հորի կառուցման պահանջարկ	Վանաշեն բնակավայրում վերանորոգել 4 և կառուցել 2 հորքայի հոր		

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ		
Ցուցանիշներ	**Չափի միավոր**	**2022**
Վարչական շրջանի տարածք	Հա	**526.93**
Բնակավայրի բնակելի	**Հա**	**111.30**
Գյուղատնտեսական հողեր Որից՝	**Հա**	**363.75**
Վարելահող	**Հա**	**185.10**
Բազմամյա տնկարկներ	**Հա**	**142.20**
Պտղատուայգի	**Հա**	**26.24**
Խաղողի այգի	**Հա**	**115.96**
Խոտհարկ	**Հա**	**0**
Արոտ	**Հա**	**0**
Այլ հողատեսքեր	**Հա**	**0**

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության ոլորտում համայնքի կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արտադրողականության բարձրացմանը, անասնաբուծության և

բուսաբուծության զարգացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգությանը, ջրային ռեսուրսների պահպանման մակարդակի բարձրացմանը,արդիական տեխնոլոգիաների ներդրմանը:

- «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում», «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» և «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման» ծրագրերի շրջանակում իրականացվելու է գյուղատնտեսական կենդանիների պատվաստում, բույսերի պաշտպանության միջոցառումներ և խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում:
- Խորհրդատավական ծառայություններ են մատուցվելու ագրարային ոլորտի տարբեր ուղղություններով՝ ներառյալ դաշտավարության, այգեգործության, անասնապահության, գյուղատնտեսական տեխնիկայի կիրառումեւ այլն:

Վիճակի նկարագրություն		
Ցուցանշներ	Վանաշեն բնակավայր	
	Չափիմիավոր	2022
Բազմաբնակարան շենքեր	/հատ/	0
Վերելակներ	/հատ/	0
Բակային խաղահրապարակներ	/հատ/	0
Հանգստի գոտիներ	հատ	0
Թեքահարթակներ	հատ	0
Տանիքներ	/հատ/	0
Մուտքեր	/հատ/	0

ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ,ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ,նախաձեռնող,կարողունակ,մրցունակ

և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը:

Հանրակրթական որակյալ արդյունքի ապահովումն անհնար է առանց վաղ մանկության զարգացման պատշաճ համակարգի և նախադպրոցական կառույցների ցանցի ամբողջական հասանելիության, որին հասնելու համար նախատեսվում է կառուցել նորմանկապարտեզներ և վերազինել գործող մանկապարտեզները: Կրթության բոլոր մակարդակների համար առանցքային են լինելու ներառական կրթական միջավայրի ստեղծումը, նախադպրոցական հաստատությունների մանկավարժների մասնագիտական կարողությունների շարունակական բարելավումը:

Վանաշեն բնակավայրում խոշորացված համայնքում մշակութային ժառանգության ոլորտում հիմնական ուղղություններն են լինելու հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրության, օգտագործման և հանրայնացման շարունակականության ապահովումը, մշակութային զբոսաշրջությանը նպաստող ծրագրերի իրականացումը: Նախատեսվում է համայնքի մշակութային շենք-շինությունների վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ, ինչը կնպաստի խոշորացված համայնքի բնակիչների ընդգրկվածությանը մշակութային կյանքին: Զարգացման նպատակներից ելնելով նախատեսվում է բնակավայրերի գրադարանների վերանորոգման, բարեկարգման և նոր տեխնոլոգիական միջոցներով վերազինելու աշխատանքներ:

Վանաշեն բնակավայրում սպորտի զարգացման նպատակով նախատեսվում է մարզադաշտերի, մարզահրապարակների, մարզասրահների կառուցապատման և բարեկարգման աշխատանքներ: Խրախուսվելու և օժանդակություն է ցուցաբերվելու սպորտային մրցաշարերի մասնակից մարզիկներին և նրանց մարզիչներին: Պարբերաբար նախատեսվում է կազմակերպել ներհամայնքային մարզական միջոցառումներ, որտեղ կխրախուսվի առողջ ապրելակերպի գաղափարը:

Վանաշեն բնակավայրի դպրոց

Հ/հ	Ենթակառույց	Շենքի վիճակը	Աշակերտների թիվը	Աշխատողների թիվը
1	Վանաշենի միջնակարգ դպրոց	վթարային	320	47

Վանաշեն բնակավայրի <<Վանաշեն>>մանկապարտեզ

Հ/հ	Ենթակառույց	Հասցե	Կառուցման Տարեթիվ	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման, փոխարինման, գույքի կարիք	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը	Խմբերի թիվը
1	<<Վանաշեն>> մանկապարտեզ	Կ.Ալոյան 24	1960թ.	բավարար	Ունի մասնակի վերանորոգման և գույքի կարիք	93	16	3

Վանաշեն բնակավայրի գրադարան

Հ/հ	Կազմակերպության անանվանումը	Աշխատողների թիվը	Գրքային ֆոնդը	Շենքային վիճակը
1	Վանաշեն բնակավայրի գրադարան	1	2775	վատ

Վանաշեն բնակավայրում գործող մարզադպրոցներ

Հ	Կազմակերպության անվանումը	Մարզաձևերի թիվը	Խմբերի թիվը	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը
1	Մարզասրահ	1	1	20	1

	Հանգստի գոտիներ	հատ	0
	Բակային խաղահրապարակներ	հատ	0
	Թեքահարթակներ	հատ	0
	Կրթությունև մշակույթ		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	1
	Երեխաների թիվը	երեխա	93
	Աշխատողների թիվը	մարդ	16
	Հանրակրթական դպրոց	հատ	1
	Երեխաների թիվը	երեխա	320
	Աշխատողների թիվը	մարդ	47
	Երաժշտական դպրոց	հատ	0
	Մարզադպրոց	հատ	1
	Արվեստի դպրոց	հատ	0
	Գրադարան	հատ	1
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հատ	0

	Հուշարձաններ	հատ	2
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչ ապատգոտի	քմ	0
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հատ	1
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	0
	Զբոսաշրջություն		
	Տեսարժանվայրեր	հատ	0
	Պատմամշակութայինվայրեր	հատ	0
	Եկեղեցիներ	հատ	0

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ՏԱՓԵՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բնակավայրի աշխարհագրական դիրքը.պատմական ակնարկ

Տարածքը՝ 891.84հա:

Գյուղ Արարատի տարածաշրջանում, Արտաշատ քաղաքից 5-6կմ հարավ-արևելք:Նախկինում ունեցել է Կիրովի անվան սովխոզ անվանումը:Տափերական է վերանվանվել 1991 թ-ին: Անվանումը առաջացել է պատմական մայրաքաղաք Արտաշատի /մ.թ.ա. 2-րդ դար/ Արաքսգետի վրայի Տափերական կամրջի անունից: Տեղադրված է Միջինարաքսյան գոգավորությունում՝ ծովի մակարդակից 830 մ բարձրության վրա: Տափերական համայնքում կլիման խիստչորային է,ամառը շոգու տևական,իսկ ձմեռը ցուրտ ու անկայուն ձյունածածկույթով: Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10-11⁰C: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -10-ից մինչև -15: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից մինչև 26⁰C,իսկ առավելագույնը՝ 42⁰C: Այստեղ գոլորշացումը գերազանցում է

մթնոլորտային տեղումների քանակին, որի հետևանքով հնարավոր չէ առանց արհեստական ոռոգման գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնել:Գյուղի կլիմայի վրա մեծ ազդեցություն են թողնում հարավարևելքից փչող տաք քամիները, ինչն էլ ամառվա ընթացքում զգալի բարձրացնում է օդի ջերմաստիճանը:Հաճախ ինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է:

1929թվականին գյուղը հիմնադրել են վանեցի 9-11 ընտանիք:Մինչև 1939թվականը անվանվել է N2սովխոզ, 1939 թվականից վերանվանվել բոլշևիկյան առաջնորդ Սերգեյ Կիրովի անունով:

1970թ-ին գյուղն ունեցել է 600 տնտեսություն, 2887բնակիչ:Այժմ գյուղն ունի 860 տնտեսություն, 4010 բնակիչ : Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 51%, կանայք՝ 49%: Բնակչության մեջ 0-16 տարեկան 779 բնակիչ , 17-63 տարեկան 2834 բնակիչ , 63-ից բարձր 397 բնակիչ:Գյուղն ունի 860 տնտեսություն: Ունի դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքում կան 3 խաղողի վերամշակման ձեռնարկություններ,ալրաղաց, հացի թխման 4ձեռնարկություն:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է,համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային կուլտուրաներ,ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ,թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

ՎԻՃԱԿԻՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
Ցուցանիշներ		**Չափիմավոր**	**2022**
	Բնակչություն	Մարդ	4010
	Վարչականշրջանիտարածք	Հա	891.84
	´Ý³Ï³í³ÛñÇ µÝ³Ï»ÉÇ	Հա	152.633

	¶ÛáõÕ³ïÝï»ëÏ³Ý ÑáÕ»ñ որից՝	Հա	659.873
	í³ñ»É³ÑáÕ	Հա	307.982
	µ³½Ù³ÙÛ³ ïÝÏ³ñÏÝ»ñ	Հա	248.720
	åïÕ³ïáõ ³Û·Ç	Հա	66.186
	Ë³ÕáÕÇ ³Û·Ç	Հա	182.534
	ËáïÑ³ñÏ	Հա	0
	³ñáï	Հա	29.293
	³ÛÉ ÑáÕï»ëù»ñ	Հա	73.878
	փողոցներիերկարություն որից՝	Կմ	14.35
	ասֆալտապատ	Կմ	1.2
	Կոմունալտնտեսություն		
	Բազմաբնակարանշենքեր	հատ	9
	Վերելակներ	հատ	0
	Վթարայինշենքեր	հատ	17
	Անհատականբնակելիտներ	միավոր	821
	Փողոցայինլուսավորություն որից՝	կմ	13.65
	ԼԵԴ (LED)	կմ	13.65
	Առևտուրևսպասարկում		
	Առևտրիսպասարկմանփոքրևմիջինօբյեկտներ	հատ	18
	Բարեգործականճաշարան	հատ	0
	Հյուրանոցներ	հատ	1
	Շուկաներ	հատ	0
	Բարեկարգում		
	Հանգստիգոտիներ	հատ	0
	Բակայինխաղահրապարակներ	հատ	0
	Թեքահարթակներ	հատ	5
	Կրթությունևմշակույթ		
	Նախադպրոցականհաստատություններ	հատ	1
	Երեխաներիթիվը	երեխա	115
	Աշխատողներիթիվը	մարդ	24
	Հանրակրթականդպրոց	հատ	1
	Երեխաներիթիվը	երեխա	353
	Աշխատողներիթիվը	մարդ	51
	Երաժշտականդպրոց	հատ	0
	Մարզադպրոց	հատ	1
	Արվեստիդպրոց	հատ	0
	Գրադարան	հատ	1
	Գեղարվեստականդաստիարակությանկենտրոն	հատ	0
	Հուշարձաններ	հատ	4
	Բնապահպանություն		
	Սպասարկվողկանաչապատգոտի	քմ	250
	Առողջապահություն		1
	Առողջապահականհիմնարկներ	հատ	1
	Մասնավորառողջապահականհիմնարկներ	հատ	0
	Զբոսաշրջություն		0
	Տեսարժանվայրեր	հատ	0
	Պատմամշակութայինվայրեր	հատ	0

	Եկեղեցիներ	հատ	0

a) Բնակավայրի հիմնախնդիրները՝ հիմնվելով բնակավայրում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել բնակավայրում ներկայումս առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները:
b) Բնակավայրի մշակույթի տան մասնակի ջեռուցում
c) Բնակավայրի վարչական շենքի 1-ին հարկի վերանորոգում
d) Բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում
e) Բնակավայրի երկրորդական փողոցների ասֆալտապատում – 13150գ ծամետր
f) Բնակավայրի դաշտամիջյան ճանապարհների հարթեցում և խճապատում
g) Բնակավայրում կոյուղու ցանցի կառուցում
h) Բնակավայրում ապաստարանի կառուցում
i) Բնակավայրում եկեղեցու կառուցում
j) Բարելավել բնակավայրի աղբահեռացման որակը

2022-2026թվականների նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրիանվանումը	Համագործակցությունն	Անմիջականն պատակը	Հիմնականշահառուները	Սկիզբըև ավարտը	Ֆինանսվորմանաղբյուր
1	Բնակավայրի մշակույթի տան մասնակի ջեռուցում		Մշակույթի տան պահպանում հետագա առաջացող խնդիրներից: Ձմեռային դասաժամերի ապահովում և անցկացում:	Բնակիչներ		
2	Բնակավայրի վարչական շենքի 1-ին հարկի		Վարչական շենքի պահպանում:	Բնակիչներ		

	վերանորոգում					
3	Բնակավայրի ոռոգման ցանցի կառուցում		Ոռոգման ջրի կորուստների նվազեցում մինիմալի,գյուղատնտեսական ոլորտի զարգացման խթանում:	Բնակիչներ		
4	Բնակավայրիերկրոդական փողոցների ասֆալտ ապատում – 13150 գծամետր		Բարեկարգ վիճակ,ճանապարհների երթևեկելի հատվածի բարեկարգում 13150 գծամետր:	Բնակիչներ		
5	Բնակավայրի դաշտամիջյան ճանապարհների հարթեցում և խճապատում		Բնակիչների կողմից մշակվող հողատարածքներ անցանելիության ապահովում,գյուղ. մթերքիիրացմանմակարդակիբարձրացում:	Բնակիչներ		
6	Բնակավայրում կոյուղու ցանցի կառուցում		Սոցիալ կենցաղային վիճակի բարելավում	Բնակիչներ		
7	Բնակավայրում ապաստարանի կառուցում		Պատերազմական իրավիճակում բնակիչների անվտանգության ապահովվածություն	Բնակիչներ		
8	Բնակավայրում եկեղեցու		Հոգևոր սննդի ապահովվումը	Բնակիչներ		

	կառուցում					
9	Բարելավել բնակավայրի աղբահեռացման որակը		Զուգահեռ աղբամանների տեղադրում կենտրոնական փողոցներում: Մաքուր շրջապատ:	Բնակիչներ		

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ
ՓՈՔՐ ՎԵԴԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բնակավայրի աշխարհագրական դիրքը.պատմական ակնարկ

Փոքր Վեդի բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Բիբլիական Արարատի ներքո, Արաքս գետի ձախափին, Երևանից 28 կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից հեռու է 10 կմ, Վեդի քաղաքից 12կմ, ծովի մակերևույթից բարձր է 820 մ: Զբաղեցնում է 1600. 99 հա տարածք: Բնակավայրը հիմնադրվել է 1831թվականին: Բնակավայրի նախկին անվանումը եղել է Քիչիկ Վեդի: Քիչիկ Վեդին արաբերեն բառ է, որը նշանակում է փոքր տափաստան, հետագայում՝ թարգմանելով արաբերենից հայերեն, բնակավայրը կոչվել է Փոքր Վեդի: Բնակավայրը սահմանակից է Թուրքիային և Շահումյան, Տափերական, Նոր կյանք, Լուսառատ բնակավայրերին: Բնակավայրի տարածքում է գտնվել Հայաստանի նախկին մայրաքաղաքներից մեկը՝ Արտաշատը, որտեղ դեռևս մ.թ.ա. I դարում գործել է թատրոն: Բնակավայրի տարածքին կից է պատմական Խոր Վիրապ վանական համալիրը, որի տարածքում է գտնվում պատմական Արտաշատի բանտը, որտեղ 287 թ. բանտարկվել է Գրիգոր Լուսավորիչը, որը հետագայում՝ 301 թվականին, դուրս գալով զնդանից, դարձավ Հայոց I կաթողիկոսը: 1922

թվականից բնակավայրը վերաբնակեցվել է 1915 թվականի Մեծ Եղեռնից մազապուրծ եղած հայ գաղթականներով՝ Վանից, Մոքսից, Մամրտանից, Շատախից, Թիմարից, Գավաշից, Կարճկանից, Հակուկից, Հաղպատից իսկ հետագայում բնակչությունն ավելացել է Հայաստանի տարբեր տարածաշրջաններից տեղափոխված բնակիչների հաշվին: Բնակավայրի կլիման մեղմ է, չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ և շոգ ամառ: Ձմեռը սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -20 ^{0} -ից՝ -25 ^{0}, ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24 ^{0}-ից 26 ^{0}, իսկ առավելագույնը՝ 42^{0}: Ագրոկլիմայական տեսակետից բնակավայրն ընկած է ոռոգման գոտում:

ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
Ցուցանիշներ		**Չափի միավոր**	**2022**
	Բնակչություն	Մարդ	3622
	Վարչական շրջանի տարածք	Հա	**1600,99**
	´Ý³Ï³í³ÛñÇ µÝ³Ï»ÉÇ	Հա	144. 686
	Հասարական և խառը կառ. ընդ օգտագործման և այլ հողեր	Հա	261. 585
	¶ÛáõÕ³ïÝï»ëÏ³Ý ÑáÕ»ñ որից՝	Հա	1004,888
	í³ñ»É³ÑáÕ	Հա	516,942
	µ³½Ù³ÙÛ³ ïÝÏ³ñÏÝ»ñ	Հա	154,081
	åïÕ³ïáõ ³Û·Ç	Հա	70,167
	Ë³ÕáÕÇ ³Û·Ç	Հա	83,914
	ËáïÑ³ñÏ	Հա	0
	³ñáï	Հա	218,257
	Էներգետիկային, տրանսպորտ	Հա	21. 275
	Հատուկ պահպանվող տարածքներ	Հա	124. 538
	Արդյունաբերական, ընդերք օգտագործման	Հա	8. 205
	³ÛÉ ÑáÕï»ëù»ñ	Հա	35. 813
	ասֆալտապատ	Կմ	2,7
	փողոցների երկարություն, որից՝	Կմ	23
	Կոմունալ տնտեսություն		
	Բազմաբնակարան շենքեր	հատ	1
	Վերելակներ	հատ	0
	Վթարային շենքեր	հատ	0
	Անհատական բնակելի տներ	միավոր	652
	Փողոցային լուսավորություն	կմ	18,0

	որից՝		
	ԼԵԴ (LED)	կմ	0,7
	Առևտուր և սպասարկում		
	Առևտրի սպասարկման փոքր և միջին օբյեկտներ	հատ	22
	Բարեգործական ճաշարան	հատ	0
	Հյուրանոցներ	հատ	0
	Շուկաներ	հատ	0
	Բարեկարգում		
	Հանգստի գոտիներ	հատ	0
	Բակային խաղահրապարակներ	հատ	0
	Թեքահարթակներ	հատ	0
	Կրթություն և մշակույթ		
	Նախադպրոցական հաստատություններ	հատ	1
	Երեխաների թիվը	երեխա	130
	Աշխատողների թիվը	մարդ	25
	Հանրակրթական դպրոց	հատ	1
	Երեխաների թիվը	երեխա	402
	Աշխատողների թիվը	մարդ	54
	Երաժշտական դպրոց	հատ	0
	Մարզադպրոց	հատ	0
	Արվեստի դպրոց	հատ	1
	Գրադարան	հատ	1
	Գեղարվեստական դաստիարակության կենտրոն	հատ	0
	Հուշարձաններ	հատ	3
	Բնապահպանություն		
	Սպասարկվող կանաչապատ գոտի	քմ	0
	Առողջապահություն		
	Առողջապահական հիմնարկներ	հատ	1 ամբուլատորիա
	Մասնավոր առողջապահական հիմնարկներ	հատ	0
	Զբոսաշրջություն		
	Տեսարժան վայրեր	հատ	0
	Պատմամշակութային վայրեր	հատ	2

Թույլ կողմեր

- Գյուղատնտեսական մթերքների շուկաների հեռուլինելը
- Ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու)բացակայությունը
- Դաշտամիջյան և համայնքային ճանապարհների անբարեկարգվիճակը

- Խմելու ջրագծերի մաշվածությունը և հաճախակի կրկնվող վթարները
- Այցելուների և զբոսաշրջիկների ժամանցի համար գրավիչ միջոցառումների,ժամանցի վայրերի բացակայություն
- Գյուղատնտեսական մեխանիզացիայի անբավարար վիճակ
- Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնի բացակայություն
- Ոռոգման ցանցի մոտ 70%հողային հունով առուների առկայություն
- Բնակավայրում առկա սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը

ՈՒԺԵՂԿՈՂՄԵՐ

- Բնակավայրում մեծ աշխատուժի առկայություն
- Խոր Վիրապվանական համալիրի և այլ պատմամշակութային արժեքների առկայություն
- Հանրապետության այլ բնակավայրերից և արտերկրից ժամանած մեծ թվով զբոսաշրջիկների առկայություն
- Խաղողագործության զարգացած ավանդույթներ
- Մշակութային և սպորտային հարուստ ժառանգություն
- Բնակավայրում գյուղատնտեսության զարգացման համար հողային բավականին մեծ ռեսուրսների առկայություն
- Բնակավայրի համեմատաբար բարենպաստ բնակլիմայական պայմաններ
- Բնակավայրում միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի,արվեստի դպրոցի,մշակույթի տան,բուժամբուլատորիայի առկայություն
- Բնակավայրի մոտ 90% փողոցների գիշերային լուսավորության առկայություն
- Բնակավայրում մոտ 85% գազամատակարարման առկայություն

• 2022- 2026 թվականի նախատեսվող ծրագրեր						
	Ծրագրի անվանումը	Համագործակցությունն	Անմիջական նպատակը	Հիմնական շահառուները	Սկիզբը և ավարտը	Ֆինանսավորման աղբյուր
1	Ոռոգման համակարգի հիմնանորոգում		Փոքր Վեդի բնակավայրի ոռոգման ցանցի բարելա-վում, գյուղ. նշանակության հողերի մշակման խթանում	Փոքր Վեդի բնակավայրի գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչներ		
2	Ֆուտբոլի դաշտի կառուցում		Բնակավայրի երիտասարդ- ների շրջանում սպորտի զարգացում և բարելավում	Բնակավայրի բնակիչներ		
3	Խաղահրապարակի կառուցում		Փոքր Վեդի բնակավայրի երեխաների և տարեցների առողջ ապրելակերպի ապահովում, արդյունավետ ժամանցի կազմակերպում	Բնակավայրի բնակիչներ		
4	Ա. Խաչատրյան, Տ. Պետրոսյան և Արաբոյի փողոցների լուսավորություն		Բնակավայրի բնակիչների համար լուսավոր ճանա- պարհների առկայություն	Բնակավայրի բնակիչներ		
5	Բնակավայրի փողոցային լույսերի ցանցի բարեկարգում և հին լուսատուների փոխարինում էներգախնայող LED լույսերով		Բնակավայրի բնակիչների համար լուսավոր ճանա- պարհների առկայություն	Բնակավայրի բնակիչներ		
6	Ա. Խաչատրյան, Տ. Պետրոսյան և Արաբոյի փողոցների գազաֆիկացում		Նշված փողոցների բնակաիչներին գազի հասանելիություն	Բնակավայրի բնակիչներ		

7	Փողոցների ասֆալտապատում		Բնակավայրի բնակելի տարածքում փողոցների վիճակի բարելավում	Բնակավայրի բնակիչներ		
8	Այգու հիմնում		Բնակավայրի տարածքում կանաչապատ ժամանցային գոտու առկայություն	Բնակավայրի բնակիչներ և զբոսաշրջիկներ		
9	Գյուղի գերեզմանոցի ճանապարհների ասֆալտապատում, ոռոգման ջրի խնդրի կարգավորում		Բնակավայրի գերեզմանոցի տարածքում մաքրություն, սանիտարական պահպանում, կանաչապատում	Բնակավայրի բնակիչներ		
10	Մշակույթի տան և մանկապարտեզի ջեռուցման ցանցի բարելավում		Մշակութային կյանքի խթանում և նախադպրոցական հաստատությունը ամբողջ տարին աշխատեցնելու համար	Բնակավայրի և հարակից գյուղերի բնակիչներ		
11	Մանկապ. խաղահր ապարակի կառուցում և տարածքի բարեկարգում		Նախադպրոցան կրթությունը հավուր պատշաճի կազմակերպելու	Բնակավայրի բնակիչներ		